

Nous vous souhaitons une Bonne et Heureuse Année 2002, et prions nos clients de retirer les relevés et les arrêtés de leurs comptes au 31 décembre 2001, ainsi que la correspondance et les avis qui leur sont destinés, à tous nos guichets, à partir du 2 Janvier 2002.

البنك اللبناني الفرنسي
BANQUE LIBANO-FRANÇAISE

ԱԶԳԱԿ

ՕՐԱԹԵՐԻԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

ازتاک جريدة يومية سياسية وأدبية - اليوم للسلوة - إشتا درويشيان

1500 L.Ո. 74ԳԳ ՏԱՐԻ, ԹԻԻ 244 (21000) ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 31 ԳԵԿՏԵՄԲԵՐ 2001 10 ԷԶ

ՍԱՐԳՍԵԱՆ ԵՒ ԲԼԵՊԱՆՈՎ
ՍՏՈՐԱԳՐԵՑԻՆ
ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ ՄԸ

Հայ - ռուսական միջկառավարական տնտեսական յանձնաժողովի համաահապահներ՝ Հայաստանի պաշտպանության նախարար Սերժ Սարգսեան եւ Ռուսիոյ փոխ վարչապետ Իլիա Բլեպանով Շաքար օր Երեւանի մէջ ստորագրեցին Հայաստանի Ռուսիոյ ունեցած պարտքին գծով համաձայնագիր մը: Ըստ համաձայնագրին՝ Հայաստան իր ունեցած 97 միլիոն տոլար պարտքին դիմաց Ռուսիոյ պիտի տրամադրէ բանժետուներ՝ կարգ մը ձեռնարկութիւններու մէջ:

ԱՀԱՐԵԿԶՈՒԹԵԱՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՑԱՆԿԻՆ ՎՐԱՅ ՀԸԶՊԱԼԼԱՅԻ ԱՆՈՒՆԸ ԶԿԱՅ ԿԸ ՎՍՏԱՆԵՅՆԵ ՆԱԽԱՐԱՐ ՀԱՄՈՒՏ

Արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտ Շարաթ օր յայտարարեց, որ ահաբեկչութեամբ ամբաստանուած անձերու եւ կազմակերպութիւններու եւրոպական անուանացանկը իրեն փոխանցուած է պաշտօնապէս եւ ցանկին վրայ Հրգպալայի ո'չ ներքին, ո'չ արտաքին թեւերուն ակնարկութիւն կայ: Համմուտ գոհունակութիւն յայտնելով յոյս յայտնեց, որ իրողութիւնը նշան մը կ'ըլլայ, որ դիմադրութեան գծով Լիբանանի կեցուածքը հասկնալի կը դառնայ, զայն ահաբեկչութեանն զանազանելու իմաստով:

Նախարարը նաեւ ըսաւ, որ ահաբեկչութեան եւրոպական ցանկը յար եւ նման է ամերիկեան ցանկերուն:

Համմուտ նաեւ յայտնեց, որ արաբական գերաստիճանի որոշումներու հետապնդման յանձնախումբի Գահիրէի ժողովի անդամներուն միջեւ համաձայնութիւն գոյացաւ Զիւնուար Ծին նախատեսուած ժողովը յետաձգելու միջեւ Փետրուար, որովհետեւ յանձնախումբի վերջին ժողովէն ետք չըջանալին կացութիւնը ոչ մէկ փոփոխութիւն կրած է: Ան ըսաւ, որ ինք այս ուղղութեամբ հաղորդակցութիւններ ունեցած էր Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսայի եւ յանձնախումբի նախագահին՝ յորդանանցի իր պաշտօնակիցին՝ Ապտէլ Իւահ խաթիպի հետ:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ
ԵՒ ՄԱՐՄԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԱՐԶԻՆ ՄԷԶ

ՀԱՅԵԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ



Երէկ՝ Կիրակի, 30 Դեկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 1:00ին, երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութեան կեդրոնատեղիին մէջ նախարար Սեպուհ Զոյնանեան եւ Հայաստանի մշակոյթի, մարմնակրթութեան եւ երիտասարդութեան հարցերու փոխ նախարար Կարէն Արիստակէսեան ստորագրեցին հայ-լիբանանեան գործակցութեան համաձայնագիր մը: Ներկայ էր նաեւ նախարարութեան տնօրէն Զէյտ խիամէ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

«ԱԶԴԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԲԱՅԱՌԻԿԸ


224 ԷԶ ՍԱԿ՝ 5000 L.Ո.

ՊԱՂԵՍՏԻՆԵՒԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՏԱԳՆԱՊ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ՍՊԱՆՆԵՑ ՎԵՑ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐ

Իսրայէլեան բանակին հաստատումով՝ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթի պինադուլի յայտարարութեանն ի վեր Իսրայէլի ու իսրայէլացիներուն դէմ պաղեստինեան յարձակումները մեղմացած են, թէեւ երէկ իսրայէլեան ուժերը հիւսիսային Կապայի Էլէյ Սինայի բնակեցման վայրին մօտ կրակ բացած եւ սպաննած են պաղեստինցի երէկ պինտալներ, ինչպէս նաեւ 3 այլ պաղեստինցիներ:

Բանակը հրապարակեց տեղեկագիր մը, ուր կը նշուի, թէ երկու շաբաթէ ի վեր յարձակումներուն թիւը նուազած է եւ համեմատաբար աւելի խաղաղ մթնոլորտ մը կը տիրէ: 16 Դեկտեմբերին Արաֆաթ ճառ մը արտասանած էր, որուն ընթացքին յատարարած էր պինտալ մը եւ ծայրայեղական շարժումներէն պահանջած վերջ տալ Իսրայէլի դէմ յարձակումներուն եւ անձ-



Իսրայէլեան ուժեր կ'արգիլեն ցոյցերը:

նասպանական գործողութիւններուն: Բանակին տեղեկագիրը կը նշէ, որ Արաֆաթի յայտարարութեանն առաջ, պաղեստինցիները միջին հաշուով, օրական 18 գործողութիւն կը կատարէին: 16 Դեկտեմբերէն ետք,

գործողութիւններուն թիւը իջած է 11ի: Իսրայէլեան օրաթերթերն ալ ակնարկած են այս կացութեան: Գրեթէ բոլոր թերթերուն մէջ ակնարկութիւն կայ տիրույթ: «Մարիւ»

հարց տուաւ. «Արդեօ՞ք խաղաղութեան հանգրուանը սկսած է»:

Բանակին տեղեկագիրը կը յայտնէ նաեւ, որ Արաֆաթի յայտարարութիւնը նախորդող քանի մը շաբաթներուն ընթացքին աւելի քան քառասուն իսրայէլացիներ սպաննուեցան անձնասպանական գործողութիւններու, դաշունահարումներու, ձեռնառումներու եւ այլ յարձակումներու պատճառով: Վարչապետ Արիէլ Շարոնի բանբերը՝ Ռասան Կիսին սակայն դիտել տուաւ, որ գործողութիւններու նուազումն պատճառները Իսրայէլի որդեգրած ասպիւն վտուէն անխիստ միջոցառումներն են, ինչպէս նաեւ՝ Արաֆաթի դէմ գործուած միջազգային ճնշումները: Կիսին աւելցուց, որ յարձակումներուն մեղմացումը բաւարար չէ վերսկսելու համար խաղաղութեան գործընթացին: Կիսին ըսաւ նաեւ, որ Արաֆաթի իշխանութիւնը տակւին արմատախիլ չըլլաւ ծայրայեղական շարժումները եւ չձեռքարկեց անոնց պատասխանատուները, որոնք կը ծրագրեն Իսրայէլի դէմ յարձակումները:

Պաղեստինցի գլխաւոր բանագնաց Սաէպ Ուրալթաթի հապաքեց Կիսինի յայտարարութեան, դիտել տալով, որ անկախ անհրաժեշտ կը դարձնէ ամերիկացի յատուկ պատուիրակ Անթոնի Զինիի շրջան վերադարձը: Ուրալթաթի քննադատեց Կիսինը ընդգծելով, որ կոյրն անգամ կը տեսնէ, թէ յարձակումները դադրած են: Ուրալ-

թաթ աւելցուց, որ Իսրայէլի վարչապետին գրասենեակը կ'անտեսէ իր բանակին հրապարակած տեղեկագիրը եւ կատարած արժեւորումը: Պաղեստինցի պաշտօնատարր յայտնեց նաեւ, որ վարչապետին նախապիւրած ընտրանքը արհիւնահեղութեան շարունակութիւնն է եւ եթէ նոյնիսկ գետնի վրայ արհիւնահեղութիւն չկայ, վարչապետը կ'ուզէ վայն երեւակայել:

Խաղաղութեան բանակցութիւններուն վերսկսելու համար Շարոն հաստատ կը պահէ եօթնօրեայ ամբողջական հանդարտութեան պայմանը: Շարոն կը պնդէ, որ եօթնօրեայ ընթացքին փամփուշտ մը անգամ պէտք չէ դադարելու Իսրայէլի դէմ, կամ բնակեցման վայրերու հրեաներուն դէմ:

Միւս կողմէ, Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան մէկ պաշտօնատարր յայտնեց, որ Ուաշինկթընի նպատակն է վերստին շրջան ուղարկել Զինիին, սակայն տակաւին յստակ թուական մը չէ ձգողութեամբ:

Ուաշինկթըն կ'ըսէ, որ Զինի պիտի վերադառնայ, երբ պաղեստինցիները աւելի շօշափելի քայլեր տանեն վերջ տալու համար ծայրայեղականներուն յարձակումներուն եւ երբ Իսրայէլ մեղմացնէ պաղեստինեան շրջաններուն դէմ պատժամիջոցները:

ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑ ՇՐՋԱՓԱԿՈՒՄԻՆ ՂԵՄ

Պաղեստինեան շրջաններուն շրջափակումը տնտեսական ծանր պայմաններ կը ստեղծէ Կապայի եւ Այսրյորդանանի բնակիչներուն: Շաբաթ օր, իսրայէլացի պինտուներ արցունքաբեր ումբեր արձակեցին խումբ մը պաղեստինցի ղեկավարներուն դէմ, որոնք կը բողոքէին պատժամիջոցներուն դէմ: Աւելի քան հարիւր ցուցարարներու Սաէպ Ուրալթաթի հապաքեց Կիսինի յայտարարութեան, ֆրանսացիներ եւ բրիտանացիներ: Ցուցարարները հրկիւզած էին Ռամալայի մօտ իսրայէլեան բանակին պատկանող կեդրոն մը, որ պարապ էր:

Ցոյցը կապակերպողները ըսին, որ օտարահպատակները

ԲԱԶՄԱԶԳԵԱՆ ՈՒԺԵՐՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳԾՈՎ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ ԳՈՅԱՅԱԾ Է

Աֆղանիստանի մէջ բազմազգեան ուժերու հաստատումին գծով համաձայնութիւն մը գոյացած է երէկ եւ ըստ արտաքին գործոց առժամեայ նախարար Ապտալլա Ապտալլայի, օտար կարգ մը ուժեր արդէն իսկ Աֆղանիստան հասած են:

Ան երէկ յայտնած է նաեւ, որ Ուսամա Պըն Լատէն հաւանաբար տակաւին Աֆղանիստան կը գտնուի: Նախապէս կ'ըսէր, թէ ան խոյս տուած է:

Ապտալլա ըսած է, որ ամերիկեան զինուորա-

կան գործողութիւնները, որոնք ներկայիս կեդրոնացած են փաքիստանեան սահմանին մօտակայ լեռնային շրջաններու վրայ՝ «Քալիտա» ցանցին գլխեակներուն եւ անոր ղեկավարին՝ Պըն Լատէնի փնտռութեանը, տակաւին վերջ չեն գտած եւ պէտք է շարունակել մինչեւ որ Աֆղանիստանի մէջ ահաբեկչական բոլոր բնիքները քանդուին:

Ապտալլա մերժած է խօսիլ օտար ուժերու թիւին, անոնց կեցութեան տեւողութեան եւ

աշխատելաձեւին մասին:

Անցեալ շաբաթ, պաշտպանութեան առժամեայ նախարար Մոհամէտ Ֆահիմ յայտնած էր, թէ 3000 օտար ուժեր պիտի հաստատուին: Անոնց մէկ երրորդը պիտի օգտագործուի ապահովութեան հակելու համար, իսկ մնացեալը պիտի գործածուի մարդասիրական եւ գումակային աշխատանքներու համար:

Շաբաթ օր, աֆղան եւ բրիտանացի ուժեր Քապուլի մէջ առաջին անգամ ըլլալով միասնաբար շրջազգայած են՝ առ ի պատրաստութիւն խաղաղարար գործողութեան:

Ֆահիմ կ'ըսէ, որ ամերիկեան ուժեր կոչումները վերջ գտնեն, յայտնելով, թէ Պըն Լատէն հաւանաբար Փաքիստան խոյս տուած է, իսկ անոր գլխեակները ցիր ու ցան եղած են:

Իսլամապատ չ'անտեսել անք կարելիութիւնը, թէ Պըն Լատէն կրնայ իր հողամասերուն վրայ գտնուիլ, իսկ Ուաշինկթըն կը խոստովանի, որ չի գիտեր, թէ ան ո՞ր էր:

Մինչ այդ, քուպացի բարձրաստիճան պաշտօնատարներ Շաբաթ օր ընդգծեցին յայտնած են Ուաշինկթընի ծրագրերուն թափանց եւ «Քալիտա» անդամ բանակները արգելափակելու կողմէն վրայ գտնուող Կուանթանա-

2001Ի ԵՒՐՈՊԱՅԻ ԳԵՂԵՑԿՈՒՇԻՆ՝ ՑՐԱՆՍԱՅԻ ԷԼՈՏԻ ԿՈՍՈՒԷՆ

Շաբաթ, 29 Դեկտեմբերի երեկոյեան ժամը 9:00ին, Պէյրութի «Պիլի» սրահին մէջ տեղի ունեցաւ Եւրոպայի գեղեցկուհիի մրցանքը, որուն իր մասնակցութիւնը բերաւ Հայաստանի գեղեցկուհի Իրինա Թովմասեան: Դատական կազմին մէջ էր Հայաստանի երիտասարդութեան հարցերու, մշակոյթի եւ մարմնակրթութեան փոխ նախարար Կարէն Արիստակէսեան: Հանդիսութիւնը կը վարէր Ֆրանսացի հանրածանօթ հաղորդավար Ժիւլիէն Փէրս:



2001ի Եւրոպայի գեղեցկուհի ընտրուեցաւ Ֆրանսայի գեղեցկուհին՝ Էլոտի Կոսուէն, 20 տարեկան, ֆիգարոյի շրջանէն:

ԱՅՆ ՀՐԼՈՒԷ ԳԱՂԹԱԿԱՅԱՆԻՆ ՄՕՏ ՊԱՅԹՈՒՄ

Շաբաթ օր, Այն Հըլուէ գաղթականային մուտքին աղբի տոպրակին մէջ պետեղուած ականի մը պայթումին կոհ գնաց Սայտայի քաղաքապետութեան աղբահաւաքներէն մէկը:

Լիբանանեան բանակը պաշարեց դէպքին վայրը եւ ապահովութեան պատասխանատուներ սկսան հետաքննութեան:

Երեսփոխան Պահիա Հարիրի հրապարակեց յայտարարութիւն մը, որուն մէջ նկատել տուաւ, թէ ատենէ մը ի վեր ականահարումներ կը կատարուին Թաամիր - Այն Հըլուէ շրջանին մէջ, կոչուեցան շրջանային պայթուցիկ պայմաններու մէջ նման դէպքերու հետեւանքներէն:

Այն Հըլուէի ապահովութեան հարցերու պաղետինեան միացեալ յանձնախումբը հաղորդագրութեամբ մը դատապարտեց արարքը, հաւատեցան, որ անկա կը ծառայէ միայն թշնամի Իսրայէլի:

ՇԱՌԻՔԻ ՖԱԽՈՒՐԻ ՄԱՀԱՅԱԻ

Նախկին նախարար եւ նախկին երեսփոխան Շաուրի Ֆախուրի մահացաւ: Ան կը տառապէր քաղցկեղէ: Երկու օր մահաբունի մէջ մնալէ ետք, ան մահացաւ Պէյրութի Ամերիկեան հիւանդանոցին մէջ:

Կիրակի կէսօրէ ետք լոյն ուղղափառներու Էշրէֆիէի Մար Նիքոլա եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ յուղարկաւորութեան արարողութիւնը, ապա հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Չաիլէ:

Շաուրի Ֆախուրի ծնած է 1940ին: Փաստաբան եղած է 1962էն ի վեր, եւ օրինական հարցերու խորհրդական՝ նախկին նախագահ Էլիաս Հըրաուիի: Վերջինին իշխանութեան օրով, փոխադրամիջոցներու եւ հանրօգուտ աշխատանքներու նախարար եղած է 1991ին, վարչապետ Օմար Քարամէի կառավարութեան մէջ, իսկ երկրագործութեան նախարար 1995-1998, վարչապետ Ռաֆիք Հարիրիի գլխաւորած կառավարութեան մէջ: 1996ին երեսփոխանական ընտրութիւններուն ընտրուեցաւ Չաիլէի լոյն ուղղափառներու երեսփոխան: 2002ի ընտրութիւններուն թեկնածութիւն չդրաւ:

ՊԵՐՐԻ - ՀԱՐԻՐԻ ԲԱՆԱԿԵՃԻՆ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ

ՆԱԽԱՐԱՐ ԲԱՆՍՕ ԿԸ ՅՈՒՍԱՅ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՄԻԶԱՄՏՈՒԹԵԱՆ

Աշխատանքի նախարար Ալի Քանսօ երէկ Տուէյրի մէջ տուաւ մամլոյ ասուլիս մը, որուն մէջ հաստատեց, որ Եթէ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրերիի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի միջեւ հարցը երկարի, անկիւս գէշ անդրադարձ պիտի ունենայ քաղաքական կայունութեան եւ անտեսական ընդհանուր վիճակին վրայ:

Քանսօ լոյն յայտնեց, որ հանրապետութեան նախագահ զօր. էմիլ Լահուտ կը նախաձեռնէ հրաւիրելու իշխանութեան պետերը հանդիպումի մը՝ լուծելու համար տարակարծութիւնները:

Ան ըսաւ, որ պետական պաշտօնեաներու նշանակումներէն ծագող հարցերը լուծելու լաւագոյն ձեւը զանոնք կատարելու համար նախարարաց խորհուրդի գործընթացի գործադրութիւնն է: Ան նաեւ ըսաւ. «Կը սպասենք, որ յառաջիկայ շաբաթ կը լուծուին խորհրդարանի նախագահին ու վարչապետին միջեւ հարցերը եւ համախոհութիւն կը գոյանայ մնացեալ նշանակումներուն շուրջ, որովհետեւ ընդունելի չէ մեր վրայ ի գործ դրուող ամերիկեան այս ճնշումներուն մէջ՝ տարուհինք ներքին տարակարծութիւններով»:

Քըրնէթ Շընուանի հանդիպումի վերջին հաղորդագրութեան անդրադառնալով Քանսօ ըսաւ, որ հոն նորութիւն չկայ, իսկ անոր մէջ Հըզպալլայի ուղղուած քննադատութիւնները դիմադրութեան վերջ դնելու համար Լիբանանի վրայ ի գործ դրուած ամերիկեան եւ իսրայէլեան ճնշումներուն ծիրէն ներս կ'իյնան:

ԱՍՍՆՈՐԻ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԱՌԻԹՈՎ

ՆԵՊԻՇ ՊԵՐՐԻ ՄԵԿՆԵՑԱԻ ԵԳԻՊՏՈՍ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրերի Շաբաթ օր ընտանեօք մեկնեցաւ Եգիպտոս՝ Ամանորի արձակուրդի համար:

Խորհրդարանի նախագահի տեղեկատուական գրասենեակը նոյն օրը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ հերքեց այն մեկնաբանութիւնները, թէ վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ տարակարծութեանց պատճառը եւ առանցքը պետական պաշտօնեաներու նշանակումներն են:

Հաղորդագրութիւնը նաեւ հերքեց կարգ մը լրատու աղբիւրներու երեսփոխաններէ քաղուած այն տեղեկութիւնները, թէ Պրերի - Հարիրի բանակցութիւնները յանգած են Պրերիի մօտիկ եւ ոչ պաշտօնեայ երեք անձնաւորութիւններ ղեւապաններ նշանակելու որոշումին: Խորհրդարանի նա-

խագահը ոչ մէկուն ղեւապան նշանակումը պահանջած է, եւ իշխանութեան պետերու հանդիպումներու առանցքը հանդիսացած է պետական պաշտօնեաներ նշանակելու համար նախարարաց խորհուրդի ճշդած ձեւը յարգելու անհրաժեշտութեան ընդգրծումը, եւ ասկա կարելի է ստուգել նոյնինքն հանրապետութեան նախագահի աղբիւրներէն, ըսաւ հաղորդագրութիւնը:

Իսկ ինչ կը վերաբերի նշանակումները

քննադատելու համար Պրերիի ուշացումին մասին հարցականներուն, ապա հաղորդագրութիւնը յիշեցուց, որ Պրերի 19 Դեկտեմբերին երեսփոխաններու հետ իր հանդիպումին ընթացքին կոչ ուղղած էր չաճապարելու, ստուգելու համար, թէ կարգ մը նշանակումներու անուններ պետական պաշտօնեութեան հարցերու խորհուրդին ներկայացուած են, եւ անոր կարծիքները նախարարաց խորհուրդին հասած են, կամ ոչ:

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ

«Անցեալից՝ Այսօր» մեր յայտագիրին վերջին երկու բաժինները տրամադրուած են 1991ի եւ 1976ի կարեւոր իրադարձութիւններու ընդհանուր վերաբաղին:

- Այսօր, 31 Դեկտեմբերին՝ 1991 տարեշրջանը:
- Չորեքշաբթի, 2 Յունուարին՝ 1976 տարեշրջանը:

Սոյն յայտագիրները կը սփռուին ժամը 12:45ին, իսկ կրկնութիւնը՝ երեկոյեան ժամը 6:45ին:

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրութի սակարանին մէջ օտար դրամացիներու փակման սակագիրները հետեւեալներն էին Շաբաթ օր.

Սուրիական թղթոսկի	31,50 - 33,50 լ.ո.
Իրաքեան տինար	50,00 - 51,00 լ.ո.
Պահրէյնեան տինար	3990,00 - 4010,00 լ.ո.
Քուէյթեան տինար	4924,42 - 4928,42 լ.ո.
Յորդանանեան տինար	2121,42 - 2125,24 լ.ո.
Ա. Մ. Էմիրութեանց տիրիամ	408,43 - 412,42 լ.ո.
Սեուտական դիալ	399,90 - 403,99 լ.ո.
Օմանեան դիալ	3900,00 - 3930,00 լ.ո.
Քաթարեան դիալ	412,15 - 416,15 լ.ո.
Եգիպտական կինէ	354,72 - 358,72 լ.ո.
Անգլիական սթերլին	2181,70 - 2185,11 լ.ո.
Գերմանական մարք	678,47 - 682,84 լ.ո.
Հոլանտական ֆլորէն	602,66 - 606,14 լ.ո.
Ֆրանսական ֆրանք	200,76 - 204,98 լ.ո.
Չուիցերիական ֆրանք	895,35 - 899,52 լ.ո.
Պելճիքական ֆրանք	33,63 - 34,42 լ.ո.
Դանիական թուրոն	230,25 - 250,27 լ.ո.
Սպանական փէպէթա	8,02 - 9,04 լ.ո.
Թրքական լիրա	3,65 - 3,70 լ.ո.
Կիպրական փաուստ	2311,85 - 2315,25 լ.ո.
Իտալական հապար լիր	687,65 - 691,70 լ.ո.
Ճափոնական հապար եէն	12019 - 12023 լ.ո.
Ամերիկեան հապար ֆրանք	2450 - 2452 լ.ո.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00 լ.ո.
Քանադական տոլար	941,40 - 945,85 լ.ո.
Աւստրալիական տոլար	766,85 - 770,65 լ.ո.
Եւրօ	1329,95 - 1361,75 լ.ո.

• ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	105,000 - 115,000 լ.ո.
Իրանեան մէկ ոսկի	91,000 - 101,000 լ.ո.
Օմանեան մէկ ոսկի	80,000 - 90,000 լ.ո.
Մեքսիքական փէսոս	475,000 - 498,000 լ.ո.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	12,300,000 - 12,800,000 լ.ո.
Մէկ օսն ոսկի	275,65 - 275,95 \$
Մէկ օսն արծաթ	4,47 - 4,51 \$

• ՍՈԼԻԴԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Գիճի Ա. ճշդում Գիճի Բ. ճշդում	
Ա. կարգի	4 3/8 4 5/8
Բ. կարգի	4 5/8 4 5/8
Բաժնեթուղթ	

Գրատուն

ՈՍԿԵԴԱՐ

• Ունինք ձեր փնտռած գիրքերը եւ բառարանները

• Ոսկեդարի ԵՐԱԶԱՎԱՆԸ, Երգարան եւ Մանկական գիրքեր

• Զարգացումի միահատոր Համայնագիտարաններ՝



Պոլաճ Համուտ, Ս. Փրկիչ եկեղեցու կից Հեռ. 01/264750
P.O.Box 11-8877 Beirut Lebanon

ԲԱԶՄԱԶԳԵԱՆ ՈՒԺԵՐՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳԾՈՎ...

Շարունակուած Ա. Էջէն



Աֆղան կիներ կը սպասեն նպաստի:

մոյի ամերիկեան ծովուծի մէկ խարխախին մէջ:

Միւս կողմէ, ցուցանիշով մը, թէ քաղաքային ապատրիստները կրնան Աֆղանիստան վերադառնալ, Աֆղանիստանի կիներու պաշտօնական շարժումին պատասխանատու Ամիսա Աֆգալի երէկ կիներուն կոչ ուղղած է հանելու «պուրքան» (խլամական տարապը), զոր պարտադրած էր թալեպան կառավարութիւնը 5 տարուան իշխանութեան ընթացքին:

Աֆգալի ըսած է, թէ քորանը կիներէն կը պահանջէ լաչակ մը կրել եւ մարմինը ծածկել. բացի ձեռքերէն եւ դէմքերէն, սակայն չի պնդեր, որ անոնք ամբողջովին ծածկուին:

Մինչ այդ, նուիրատու երկիրներ կը պատրաստուին Յունուսիին Թոքիոյի մէջ խորհրդաժողով մը կայացնել՝ Աֆղանիստանի վերականգնման յատկացում:

Ըստ ՄԱԿի եւ Համաշխարհային Դրամատան՝ վերականգնումը շուրջ 9 միլիարտ տոլար պիտի արժէ:

ԱՇԱԲԵԿՈՒԹԵԱՆ ԴԵՍ ՊԱՅԵԱՐԸ ՊԻՏԻ ԶԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Մ. Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ Ծաբաթ օր յայտարարած է, թէ ամերիկեան գլխաւորութեամբ ահաբեկչութեան դէմ պայքարը պիտի շարունակուի 2002ին:

Լոնտոնի մէջ, Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլէր անոր ձայնակցելով, խոստացած է արմատախիլ ընել Պրն Լատինի հետեւորդները եւ Աֆղանիստանի նոր կառավարութեան պօրավիզ կանգնել:

«Բազմաազգային ահաբեկիչներ մարզուած են Աֆղանիստանի մէջ եւ երկար ատենէ ի վեր հետացած անկէ», ըսած է ան եւ կոչուեցուցած, թէ անոք կը շարունակեն վտանգ հանդիսանալ:

Մեքսիքական Արաբիոյ Ֆախտ թագաւորը Շաբաթ օր յայտնած է, թէ իր երկիրը եւ Օցի միւս երկիրները իրենց առաւելագոյնը պիտի ընեն ահաբեկչութեան դէմ պայքարելու համար, այնքան ատեն որ իրենց դերակատարութիւնը իսլամութեան կը համընկնի:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԻՍՐԱՅԵԱՆ ԲԱՆԱԿԸ ՍՊԱՆՆԵՑ...

Շարունակուած Ա. Էջէն

մաս կը կապեն միջապագային միասնականութեան շարժումի մը, որոնք պաղեստինեան շրջաններ եկած են պօրավիզ կանգնելու համար պաղեստինցիներուն: Կապակերպողները յայտնեցին նաեւ, որ օտարները կը փորձեն պաղեստինցի ուսանողները հասցնել Պիր Զէյթի համալսարանը, որ Ռամալլայի մէջ կը գտնուի: Ականատեսներ յայտնեցին, որ իսրայէլացի պինտուրները նաեւ օդը կրակեցին ցրուելու համար ցուցարարները:

Միւս կողմէ, Կապալի Ժապալիա գաղթականին մէջ հարկւրաւոր պաղեստինցիներ մասնակցեցան յուղարկաւորութեան Մահմուտ Պրէյի, որ սպաննուած էր իսրայէլեան ուժերուն կողմէ: Բանակը յայտնած էր, որ Պրէյ անձնասպանական գործողութիւն մը պիտի կատարէր եւ թէ մարմինը վրայ ռումբեր կը կրէր:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ

Տիար Սկրնեի Սարգիս Տեղեւան, տիկին Ուսկնե Սարգիս Տեղեւան եւ կամ իրենց ծանօթներն կապ պահել երկրաշափ Նեգիի Պաշոյի հետ՝ գիւրջը հետաքրքրող հարցի մը համար: Հեռ.՝ 03-219662 եւ - նամակ: law@mugraby.com:

ՌՈՒՍԻԱ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՓԱԿԵԼՈՒ ՔՈՒՊԱՅԻ ԼՐՏԵՍՈՒԹԵԱՆ ԻՐ ԿԵԴՐՈՆԸ

Ռուսիա Շաբաթ օր սկսած է հրաժեշտ տալ համայնավար դաշնակից Քուպային, պատրաստուելով փակել լրտեսութեան կարեւոր կեդրոն մը՝ կղզիին վրայ ռուսական պինտորական չորս տասնամեակներու ներկայութեան վերջ տալով:

Մինչ ռուս եւ քուպացի պաշտօնատարներ Հաւանայի մօտ հրաժեշտի հանդիսութիւններ կը կատարէին, ռուս պինտորականներ կ'ըսէին, թէ Լուրտէսի լրտեսութեան կեդրոնը պարպելու աշխատանքը պիտի սկսի Յունուար 15ին:

Նախագահ Վլատիմիր Փութինի կեդրոնը փակելու որոշումին ընդդիմացած էր նախագահ Ֆիտէլ Քասթրօ, սակայն այդ որոշումը ողջունած էր Միացեալ Նահանգներու նախագահ ձորճ Պուշ:

Քուպայէն ռուսական բանակին հեռացումը Պաղ Պատերազմի օրերու 40 տարուան պատմութեան վերջ պիտի տայ: Այդ ժամանակամիջոցին, 1960ական թուականներուն, Մոսկուա պինտորներ եւ սարքեր ղրկած էր Մ. Նահանգներու սեմին, պատուիսա դառնալով անոնց:

(ՌՅԹԸԸԸ)

ՌՈՒՍԻԱ

ՓՈՒԹԻՆ ԿԸ ԼՈՒԾԷ ՆԵՐՈՒՄԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին լուծած է Ներումի Խորհուրդը, որ երկրին ամէնէն ազապական կազմակերպութիւններէ մէկը եղած է եւ հասպարտած 1992ին նախկին նախագահ Պորիս Ելցինի կողմէ:

Նախագահական հրամանագիր մը շաբաթավերջին հրահանգած է լուծել Խորհուրդը եւ փոխարէնը սպեղծել Խորհուրդներ, Ռուսիոյ 89 շրջաններու իւրաքանչիւրին մէջ՝ քրեական կառավարիչներու ուղղութիւններուն հետեւելով:

Հրամանագիրը կ'ըսէ, թէ Խորհուրդները յէտք է բաղկացած ըլլան չվճարուող անդամներէ, «որոնք կը վայելեն համայնքին յարգանքը եւ որոնք մաքուր ըլլալու վարկ ունին»:

Կառավարիչները յէտք է հրապարակեն անունները բանտարկեալներու, որոնք նախագահէն ներում կը խնդրեն:

Գրագէտներէ, դերասաններէ, թարգմաններու քննադատներէ, կղերականներէ եւ հանրային այլ անձնատրութիւններէ բաղկացած Ներումի Խորհուրդը կը վայելէր ազապական արժէքները ղաշպոտանելու վարկը՝ յետ Խորհրդային ընկերութեան մէջ, բարոյական յաճախ շփոթ մթնոլորտի մը մէջ:

(ՌՅԹԸԸԸ)

ՌԵՐԱՆԻԱ

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿ ՄԸ ՏԱՐԻՆ

Ուքրանիոյ համայնավարները Շաբաթ օր պատմական յաղթանակ մը տարած են, երբ գերագոյն ատեան մը իբրեւ հակասահմանադրական մերժած է ընդունիլ տասնամեակ մը առաջ Համայնավար Կուսակցութեան գործունէութիւնը արգիլելու որոշում մը:

Համայնավարներուն արտօնուած էր անկախ Ուքրանիոյ մէջ քաղաքական գործունէութիւնը շարունակել հակառակ 1991ին խորհրդարանի դրած արգելքին: Անկախ ներկայիս 450 աթոռ հաշուող խորհրդարանին մէջ մեծագոյն խմբակն է:

Սակայն բարեփոխուած Համայնավար Կուսակցութիւնը ամբողջական օրինականացում կը պահանջէր:

(ՌՅԹԸԸԸ)

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԷ ԵՈՒՐՈՅԻ ՆԿԱՏՄԱՍԲ

Գերմանիոյ վարչապետ Կերհարտ Շրեյտըր Նոր Տարուան առիթով այսօր արտասանութիւն խօսքի մը մէջ կը յայտնէ, թէ կը հասկնայ գերմանացիներու մտավախութիւնները՝ եւրոյի գծով, սակայն կը վստահեցնէ, թէ նոր դրամանշը աւելի լաւ օրերու բացումը պիտի կատարէ:

Բազմաթիւ գերմանացիներ մտահոգ են Յունուար 1ին շրջանառութեան դրուելիք եւրոյին գծով:

Տոյըմարքը կայունութեան եւ բարգաւաճման խորհրդանշ մը եղած է Արեւմտեան Գերմանիոյ համար՝ Բ. Աշխարհամարտէն ետք եւ Արեւելեան Գերմանիոյ համար՝ 1990ի վերամիացումէն ետք:

(ՌՅԹԸԸԸ)

ԱՐԺԱՆԹԻՆ

ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՄ ՊԱՏՐԱՍՏ՝ ՇՐԱԺԱՐԵԼՈՒ



Պուէնոս Այրէսի փողոցները դարձեալ խռովութեանց բեմ:

Արժանթինի նոր կառավարութիւնը պատրաստակամութիւն յայտնեց հրաժարելու՝ շաբաթավերջին ծայր տուած բողոքի նոր ցոյցերուն ու խռովութիւններուն պատճառով:

Վերջին խռովութիւններէն հապիւ մէկ շաբաթ ետք, տասնեակ մը ռստիկաններ վիրաւորուեցան, երբ կը փորձէին ցրուել հապարաւոր արժանթինցիներու խաղաղ ցոյց մը, որ կը բողոքէր կառավարութեան որդեգրած դրամատնային ուելեմտական նոր միջոցառումներուն դէմ: Ոստիկանութիւնը արցունքա-

բեր ռումբեր արձակած է ցրուելու համար ց ու ց ա ր ա ռ ն ե ր ը , որոնցմէ ոմանք հասան նախագահական պալատի դռներուն, իսկ ուրիշներ խորհրդարան ներխուժեցին ու կահ կարասին դուրս քաշելով՝ փոքր խարոյկներ վառեցին: Յուշարարները պահանջեցին նաեւ քաղաքական բոլոր դէպարներուն ուսնձնաւորութիւններուն հրաժարականը՝ պաշտօնը կաշառակերութեան ու փտածութեան խորհրդանիշներ համարելով:

Անցեալ շաբթուան խռովութիւնները

ԾՈՅԻ ԱՐԱԲՆԵՐԸ ՊԻՏԻ ՍԿՍԻՆ ԲԱՐՈՋՉԱԿԱՆ ԱՐՇԱԽԻ ՄԸ՝ ԲԱՐԵԼԱԽԵԼՈՒ ԻՐԵՆՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԴԻՄԱԳԻԾԸ

Ծոցի արաբ դեկավարները, որոնք մտահոգ են, որովհետեւ Արեւմուտքը «չար» կը նկատէ արաբներն ու իսլամները, կը ծրագրեն սկսիլ բազմամիլիոն տուարի քարոզչական արշաւի մը՝ բարեւաւելու համար իրենց Ժողովուրդին դիմագիծը ամբողջ աշխարհին տարածքին:

Ծոցի Գործակցութեան Խորհուրդի անդամ վեց երկիրներու դեկավարները ծրագրին մանրամասնութիւնները պիտի քննարկեն իրենց վեհաժողովին, որ սկսաւ երէկ Օմանի մէջ: Ծրագրին նպատակը պիտի ըլլայ հակադարձել արաբներուն ու իսլամներուն դէմ ձեռնարկուած «ատելութեան ու թշնամութեան» արշաւին, որ ծայր տուած Սեպտեմբերի յարձակումներէն ետք:

Օմանի արտաքին գործոց նախարար Եուսէֆ պըն Ալուուի ըսաւ, որ արաբական երկիրներուն եւ յատկապէս՝ Մեքուական Արաբիոյ դէմ յայտարարուած արշաւը ինքնին ահաբեկչութիւն է: Ան աւելցուց սակայն, որ արաբները աւելի մեծ դերակատարութիւն պէտք է ունենան ահաբեկչութեան դէմ յայտարարուած համաշխարհային պատերազմին:

Արաբական քարոզչական արշաւը գործադրուածեան պիտի դնէ նախարարական յանձնարումը մը, զոր պիտի առաջնորդէ Արաբական Միացեալ Էմիրութիւններու տեղեկատուութեան նախարար շէյխ Ապտալլա պըն Ջալտ Նահիան, որ տնօրէնն է Ապու Տապիի պատկերասփիւռի արբանեակային կայանին:

Տեղեկատուութեան մարզի արաբ մասնագէտներ ու մեկնաբաններ կ'ըսեն, թէ արաբական հարուստ երկիրներ, ինչպէս՝ Մեքուական Արաբիա, աշխատանք չեն տարած դէմ դնելու արաբական դիմագիծը աղաւաղող արշաւին:

Միւս կողմէ, Ծ. Գ. Խորհուրդի նախարարական մէկ յանձնարումը համաձայնութիւն գոյացուց արազացնելու կիրարկումը Ծոցի երկիրներուն միջեւ մաքսատնային տուրքերու միացեալ դրուութեան համաձայնագիրը: Յիշեալ համաձայնագիրը նախատեսուած էր, որ գործադրութեան պիտի դրուի 2005ին: Սակայն նախարարները համաձայնեցան զայն յառաջանել 1 Յունուար 2003ին՝ ճամբան բանալու համար Եւրոպական Միութեան հետ ազատ առեւտուրի համաձայնագրի մը իրականացման դիմաց:

(ՌՅԹԸԸԸ)

ԵԳԻՊՏՈՍ - ԻՐԱԲ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՅ ԲԱՐԵԼԱԽՈՒՄ

Եգիպտական բարձրաստիճան պատուիրակութիւն մը շաբաթավերջին Իրաք հասաւ առեւտուրի մարզի մէջ գործակցութեան թափ տալու բանակցութիւններ կատարելու համար, հաղորդեց «ԻՆԱ» լրատու գործակալութիւնը:

Պատուիրակութիւնը կ'առաջնորդէն Եգիպտոսի տնտեսութեան, պետական շահարկութիւններու, ուժանիւթի ու էլեկտրակաշառութեան եւ ճարտարարուեստի նախարարները: Պատուիրակութեան մաս կը կազմեն նաեւ գործարարներ: Եգիպտացի նախարարները իրաքցի պաշտօնակիցներուն հետ քննարկեցին ապառ առեւտուրի համաձայնագիր մը, որ ստորագրուած էր քանի մը ամիս առաջ, գործադրութեան դնելու կարելիութիւնները:

Իրաքի առեւտուրի նախարար Մոհամէտ Մահտի Սալէի ըսաւ, որ այս տարուան ընթացքին երկու երկիրներուն միջեւ առեւտուրը թափ ստացած է, հասնելով 1,7 միլիար տոլարի:

Եգիպտոս Իրաքի հետ դիւանագիտական կապերը խլած էր 1990-1991ի Ծոցի պատերազմին: Կապերը սկսան բարելաւուիլ անցնող քանի մը ամիսներուն ընթացքին:

(ՌՅԹԸԸԸ)

ՍՈՒՏԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՆՁՆԱՌՈՒ ԿԸ ՄՆԱՅ ՇԱՐԻԱՅԻՆ

Սուտանի նախագահ Օմար Հասան Պաշիր յայտարարեց, որ իր կառավարութիւնը յանձնառու կը մնայ իսլամական օրէնքին՝ շարիաին կիրարկման, որ կը մերժուի ինքնավարութեան համար պայքար մղող ոչ իսլամական հարաւէն:

Պաշիր ըսաւ, որ եթէ կառավարութիւնը որոշէ ջնջել շարիան, պիտի կորսնցնէ ժողովուրդին մօտ վայելած վստահութիւնը, օրինականութիւնն ու դերակատարութիւնը:

Սուտանի հարաւային շրջաններուն մէջ Խարթումի կառավարութեան դէմ պայքար մղող Ժողովուրդին Ապստաղրութեան Բանակին գլխաւոր պահանջը շարիան ջնջել է հարաւի մէջ, որ բնակչութեան մեծամասնութիւնը քրիստոնէայ է: Պաշիր իսլամական օրէնքը կիրարկող կառավարութիւն մը կազմեց 1989ին, երբ պետական հարուածի մը լոյսին տակ իշխանութեան հասաւ:

(ՌՅԹԸԸԸ)

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՁՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը

Ձեր ինքնաշարժին պէնզինին, մագնիսին, իւղին, ինչպէս նաեւ լուալու համար, վճարումին հետ միաժամանակ ցերկայացուցեք FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան:

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ FUEL CARD-Ը

FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կեդրոններէն.-

- ԱՅՏԻԼԻ գրասենեակ, Պուրճ Համուտ
- Համագայիցի գրախանութ, Պուրճ Համուտ
- Գրատուն Caravelle, Չալքա
- Գրատուն Sava, Այնճար
- Գրատուն Կոմիտաս, Պէյրութ
- Obelix հաստատութիւն, Անթիլիաս

FUEL CARDԸ ԿՐՆԱՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԴԵՏԵԽԵԱԼ ԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՋ

1. CORAL JAL EL DIB, Ժլ էլ Տիպ
2. HYPCO ANTELIAS, Հարաք Ալ Դաուարնէ
3. SPEED ANTELIAS, Կաթողիկոսարանի դիմաց
4. CORAL BAABDAT, Պապաւթ մայրուղի
5. SPEED ACHRAFIEH, Է Նաիր PEUGEOT ընկ. առաջ
6. HYPCO HAMRA, Պանք Տի Լիպանէն առաջ
7. MEDCO KARANTINA, Բարանքինայի մայրուղի
8. CORAL BHAMDOUN, Դամասկոսի մայրուղի
9. CORAL MAR MIKHAEL, Մար Միխայէլ, Սաատ պողոտայ
10. SPEED ALITTIHAD, Կալէրի Իթքիատ
11. MANAR FANAR, Ֆանար, Նատըր պանդոկին կից
12. CALTEX ANJAR, Այնճար
13. BASSIL DORA, Տորայի կամուրջ
14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՅԱՐԱՆ, Տորա, «Ալմագ»-ի կից
15. ԱՄԱՐԻՍԵԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Պուրճ Համուտ, Սին էլ Ֆիլի մայր պողոտայ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Մագնիսի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 թիւերուն:

ԶԱՐՏԸ ԿԸ ՍՏԱՆԱՔ ԶՐԻՕՐԵՆ

ՄՐԺԷՔՄԻՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆԱՅԵԱՐԺ ՄԸ

ԱՂԱՄԱԼ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ 7 ՅՈՒՆՈՒԱՐԻՆ

Հայաստանի ցախագահ Ռոպերթ Քոչարեանի անվտանգության ծառայության աշխատակից Աղամալ Յարուբեյանի դատավարությունը պիտի սկսի 7 Յունուար 2002-ին՝ երեւանի կեդրոնի եւ Նորք - Մարաշ համայնքներու առաջին ատենանի դատարանի դատաւոր Մհացական Մարտիրոսեանի ցախագահութեամբ:

Ա. Յարուբեյանի կը մեղադրուի այս տարւան 25 Սեպտեմբերին «Առագաստ» սրճարանին մէջ տեղի ունեցած Պ. Պողոսեանի սպանութեամբ: Ա. Յարուբեյանի ցախագահութեամբ միջոց ընտրուած է ստորագրութիւնը՝ չբացակայելու մասին:

ԱՄԱՆՈՐ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴ՝ ԶԱՒԱԽՔԻ ՄԷՋ

27 Դեկտեմբերին Հայ Առաքելական եկեղեցւոյ Զաւախքի առաջնորդական փոխանորդ Բարգէն արդ. Սալիբեանի նախաձեռնութեամբ եւ մասնակցութեամբ, Ախալքալաքի Ս. Խաչ եկեղեցւոյ բակին մէջ տեղի ունեցաւ Նոր Ծարուան եւ Ս. Ծնունդին նուիրուած հանդիսութիւն: Ներկայ էին տեղական իշխանութիւններու ներկայացուցիչներ եւ բազմաթիւ քաղաքացիներ: Զեռնարկը սկսաւ Երեւանէն հասած Մեսրոպ արք. Աշնեանի օրհնութեամբ եւ բարեմաղթութեան խօսքով:

Գեղարուեստական մասով ելոյթ ունեցաւ Երեւանի Երուանդ Մանարեանի գլխաւորած «Ազուլիս» տիկնիկային թատրոնը: Կաղանդ Պապան նուէրներ բաժնեց երեխաներուն, որմէ ետք ելոյթ ունեցաւ Հայաստանի «Սասուն» ազգագրական երգի պարի համոյթը: Հանդիսութեան աւարտին Բարգէն արդ. Սալիբեան շնորհակալութիւն յայտնեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, «Հօր Հայրենիք» Կուսակցութեան, Զաւախքի Երկրասարդական Մարզամշակութային Միութեան եւ Ախալքալաքի Շրջանային վարչութեան՝ ձեռնարկի կազմակերպման համար:

ՀԱՐՑԱԽՈՅԶԻ ՄԸ ՄԱՍՆԱԿԻՑ ՆԵՐՈՒՆ 46 ԱՌ ՀԱՐԻՒՐԸ՝

ԱՐՏԱԳԱՂԹԻ ԴԷՄ

Ըստ ընտրական համակարգերու միջազգային հաստատութեան այս տարուան 10-էն 22 Յունիս Հայաստանի մէջ կատարած հարցախոյզի արդիւնքներէն, 1500 հարցուածներուն 46 առ հարիւրը, նոյնիսկ մեկնելու կարելիութեան պարագային, կը գերադասէ ապրիլ Հայաստանի մէջ, եւ միայն 23 առ հարիւրը արտագաղթելու ցանկութիւն կը յայտնէ:

Հարցախոյզին մասնակիցներուն 13 առ հարիւրը մնալու հակում ունի, իսկ 10 առ հարիւրը՝ Հայաստանէն հեռանալու: Հարցախոյզի պատկերին համաձայն, արտագաղթելու ցանկութիւնը յատկապէս մեծ է բարձրագոյն կրթութիւն ունեցողներուն մէջ: Համայնքային կրթութիւն ունեցողներուն 22 առ հարիւրը կը գերադասէ հեռանալ Հայաստանէն:

Հարցախոյզը կատարուած է «Քաղաքացիներու իրազեկութիւնը եւ մասնակցութիւնը Հայաստանի մէջ» ծրագրի շրջագիծին մէջ՝ Միացեալ Նահանգներու Միջազգային Մարզացման Գործակալութեան ֆինանսաւորմամբ եւ Հայկական Ընկերաբանական Ընկերակցութեան աջակցութեամբ:

ՆՈՐ ԵՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՎԱՌՈՒՌՈՂ ԱՐԻՒՆ»

Վերջերս լոյս տեսած է Պարոյր Սեւակի «Վառուող արիւն» բանաստեղծութիւններու նոր հատընտիրը՝ «Ոսկան Երեւանցի» հրատարակչատունէն: Ժողովածուն կ'ընդգրկէ Պ. Սեւակի հայրենասիրական թեմայով գրած 75 բանաստեղծութիւն: Հատորը հրատարակուած է 500 տպագրանկով, իսկ տպագրական ծախսերուն համար պետական պիւտճէն յատկացուած է 600 հազար դրամ:

Հատորը՝ կազմած է Պ. Սեւակի բարեկամներէն բանաստեղծ Համլէթ Կարճիկեան, որուն համաձայն, գիրքը պէտք էր հրատարակուէր անցեալ տարի՝ Պ. Սեւակի 75ամեակին առիթով, սակայն նիւթական դժուարութիւններու պատճառով չհրատարակուեցաւ:



ՏՈՒԵԱԼ ՆԵՐ՝ ՀԱՅԱՐՏԱՆԻ ՄԷՋ ԳԱՂԹԱԿԱՆ ՆԵՐՈՒ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ ՄԱՍԻՆ

«Արմենփրես» կը յայտնէ, թէ ժընեւի մէջ 10-12 Դեկտեմբերին տեղի ունեցած գաղթականներու նուիրուած համագումարին ընթացքին Հայաստանի տարածքային հարցերու նախարար Յովիկ Արարահամեան ներկայացուցած է Հայաստանի մէջ գաղթականներու իրավիճակին մասին տեղեկութիւններ: Այսպէս, 1988 - 1992 տարիներուն Ազրպէյճանէն խոյս տուած 500 հազար հայերուն 311 հազարը կ'ապրի Հայաստանի մէջ: Ներկայիս գաղթականները կը կազմեն Հայաստանի բնակչութեան 10 առ հարիւրը: Անոնց 40 առ հարիւրը (13 հազար ընտանիք) տակաւին չունի մնայուն բնակարան: Աշխատող գաղթականներուն համեմատութիւնը 3,6 անգամ նուազ է Հայաստանի աշխատող բնակիչներուն միջինէն:

Թ. Արարահամեան նաեւ ներկայացուցած է Լեռնային Ղարաբաղի եւ Ազրպէյճանի տագնապին մասին կարգ մը տուեալներ: Լեռնային Ղարաբաղի բանակին կողմէ ազատագրուած տարածքներէն հեռացած են 510 հազար ազերիներ, մինչ Պաքու կը պնդէ, թէ անոնց թիւը չուրջ մէկ միլիոն է: Ազրպէյճանի մէջ հայերու կողմէ լքուած 92 հազար բնակարաններու մէջ տեղաւորուած են ազերի գաղթականները:

Թ. Արարահամեան յայտնած է, թէ Հայաստանի կառավարութիւնը վերջերս տուած է որոշում մը, ըստ որուն, Երեւանի կիսաւեր տուններուն մէջ ապրող իւրաքանչիւր գաղթական ընտանիքի պիտի կատարուէ երկու միլիոն դրամի յատկացում՝ գնելու համար նոր յարկաբաժիններ: Իսկ գաղթականներուն Հայաստանի քաղաքացիութիւն շնորհելու հարցը կը մնայ կառավարութեան ամէնէն կարեւոր հարցերէն մէկը: 1999-էն ի վեր Հայաստանի քաղաքացի դարձած է 38 հազար գաղթական:

ՀԱՅԱՐՏԱՆԻ ԿԵՆՍՈՒՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՔՆՆԻՉՆԵՐԸ ԲՆԱԿԻՉՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ ԾԵԾԻ Կ'ԵՆԹԱՐԿՈՒԻՆ

Հայաստանի կենսոլորտի նախարար Վարդան Այվազեան «Արմինֆո» լրատու գործակալութեան յայտնած է, թէ նախարարութեան քննիչները ապօրինի անտառահատում կամ Սեւանի մէջ ապօրինի ձկնորսութիւնը արգելելու ընթացքին յաճախ ծեծի կ'ենթարկուին շրջաններու բնակիչներուն կողմէ:

Կենսոլորտի պետական քննիչներու պետ Նազիկ Ամիրեանի կողմէ դէպի Սեւան կատարուած քննական այցելութեան մը ընթացքին շրջանի ձկնորսները փորձած են յարձակիլ անոր վրայ: Ն. Ամիրեան անձնապէս վիրաւորուած չէ: Այս հարցին քննութիւնը կը հետապնդուի իրենեւ քրէական գործ:

«ՄԻՍԹԸՄ ԱՅ Է ՏԱՌԻՆ»՝ ՏԱՐՈՒԱՆ ԵՐՐՈՐԳ ԼԱՒԱԳՈՅՆ ԵՐԳԻՉՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԸ

Վերջերս ամերիկեան «Թայմ» շաբաթաթերթը հրապարկած է 2001 տարուան լաւագոյն երգիչներուն եւ ծայնապնակներուն ցանկը, որուն մէջ երրորդ դիրքը զբաղած է հայկական «Միսթըմ աֆ Է տաու» խումբին «Թոքսիսիթի» ծայնապնակը:

Ըստ շաբաթաթերթին, «Միսթըմ աֆ Է տաու» ամէնէն բարձր եւ պերճախօս ձեւով իր ծայրը լսելի դարձուցած է:

«ԵՐԵՔ ՆՈՒՌ» ԾՐԱԳԻՐԸ Կ'ՈՒՆԵՆԱՅ ԻՐ ԴԱՏՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ԿԱՅՔԸ

«Կրթութիւն» Բարգաւաճման Համար» հիմնարկը (Ի 4 ՏԻ) յայտարարած է, թէ կը ծրագրէ հրապարակել հայկական դաստիարակութիւնը ջանքող «Երեք Նուռ» դաստիարակական ծրագրի կայքը: «Մեր նպատակն է ցոյց տալ, թէ հայութեան վերաբերեալ ամէն ինչ ստիպիլը կրնայ հետաքրքրական ըլլալ, ինչպէս նաեւ կը փափաքինք հանրութեան աւելի մատչելի դարձնել Միացեալ Նահանգներու, Հայաստանի եւ ամբողջ աշխարհի մէջ մեր կրթական աշխատանքները, ըսած է ծրագրի խմբին Մարի Լու Փափագեան:

Վերջին երեք տարիներուն ընթացքին «Ի 4 ՏԻ» հիմնարկը կը վարէ «Երեք Նուռ» ցանցը, որ վերջերս Համաշխարհային Դրամատան կողմէ ընտրուած է իբրեւ աշխարհի տարածքին համացանցի ուսուցման եւ ուսուցիչներու պատրաստութեան ինք ծրագրիներէն մէկը: Ցանցը կը կապէ 16 երկիրներու մէջ 70 դպրոցներ:

«Երեք Նուռ» կայքը նաեւ պիտի ընդգրկէ հայերէնի ուսուցման ծրագիր, որ պիտի պատշաճեցուի տարբեր մակարդակի սորվողներու համար: Այսպէս, կայքը պիտի կարենան օգտագործել, հայերէն լաւ գիտցողներուն կողմէ, հայկական վարժարաններ չյաճախողները եւ հայերէն խօսիլ չգիտցողները: Տեղեկութիւնները պիտի փոխանցուին հայերէնով եւ անգլերէնով եւ պիտի պարփակեն հայոց պատմութեան ու լեզուի ուսուցման ծրագիրներ, դաստիարակական խաղեր, պատկերազարդ պատմութիւններ եւ ուսուցման մեթոտներ:

Ծրագրի իրագործման համար նիւթական յատկացումներ կը կատարուին հայկական հաստատութիւններու եւ միջազգային կազմակերպութիւններու կողմէ: Ծրագիրը ունի նաեւ հայկական արտագրութիւններու վաճառքի բաժին: Յաւելեալ տեղեկութիւններու համար կարելի է այցելել հետեւեալ հասցէին, www.3noor.org/plans

ՀԱՅԱՐՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՌՈՊԵՐԹ ՔՈՉԱՐԵԱՆ՝ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՏ

● ՀԱՅԱՐՏԱՆԻ ԴԵՄՈՒՆԱՍԱՆ ՄԷՋ

26 Դեկտեմբերին Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան այցելած է Իրանի մէջ Հայաստանի դեսպանատուն եւ իրեն յիշատակ դեսպանատան բակին մէջ եղեւին մը տնկած է: Ապա դեսպան Գեղամ Ղարիպ-Ղանեան բարի գալուտեան խօսք արտասանելով՝ ներկայացուցած է դեսպանատան աշխատանքները: Ան նաեւ ընդգծած է թէ Հայաստան - Իրան յարաբերութիւնները աւելի պիտի ամրապնդուին նախագահին այս այցելութեամբ: Ան նախագահին յանձնած է յուշանուէր մը, եւ Հայկական Յեղասպանութեան նուիրուած հայեր-մանուած երկու գիրքեր, որոնք թարգմանուած եւ պատրաստուած են իրանահայ համայնքին միջոցով:

● ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐԵԱՆ ԹԵՀՐԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Նախագահ Ռ. Քոչարեան եւ անոր ընկերակցող պատուիրակութիւնը նոյն օրը այցելած են Թեհրանի Ս. Սարգիս եկեղեցին: Անոնք դիմաւորուած են Թեհրանի եւ Սպահանի հայոց թեմերու առաջնորդներ Սեպուհ Եպս. Սարգիսեանի եւ Կորին արք. Պապեանի, ինչպէս նաեւ գաղութի կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներուն եւ մեծ թիւով իրանահայերու կողմէ:

Սեպուհ Եպս. Սարգիսեան բարի գալուտ մաղթած է նախագահին: Եկեղեցական արարողութեանէն ետք նախագահ Ռ. Քոչարեան ծաղիկներ գետեղած է Ս. Սարգիս եկեղեցւոյ շրջափայտին մէջ գտնուող 1915 թուականի Հայկական Յիշատականիւթեան նուիրուած յուշակոթողին առջեւ:

● ՀԱՅԱՐՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ «ԱՐԱՐԱՏ» ՄԱՐԶԱՒԱՆԻՆ ՄԷՋ

26 Դեկտեմբերի երեկոյեան բազմահազար թեհրանահայեր հաւաքուած էին «Արարատ» մարզաւանին մէջ՝ հանդիպելու Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեանի հետ:

Ժողովրդային հանդիպումն առաջ, նախագահ Քոչարեան իրեն ընկերացող պատուիրակութեան հետ ներկայ գտնուած է «Վահագն» համերգահրահան մէջ Հայաստանէն Թեհրան ժամանած արուեստագէտներու ելոյթին:

Հայաստանի եւ իրանի քայլերգներու ունկնդրութեանէն ետք ելոյթ ունեցած են Թեհրանահայ բոլոր երգչախումբերու անդամները՝ միասնական կատարումով եւ Գուրգէն Մովսիսեանի ղեկավարութեամբ:

Իրանի մէջ Հայաստանի դեսպանի իր բազմախօսքին մէջ ըսած է, թէ իրանահայութեան համար յատկանշական օր մըն է այդ օրը՝ Հայաստանի նախագահին այցելութեան պատճառով:

Ապա ան բեմ հրաւիրած է Թեհրանի հայոց

թեմական խորհուրդի ատենապետ դոկտ. Այոս Թովհանիսեանը, որ ներկայացուցած է իրանահայ համայնքին անցեալն ու ներկան, իր կառոյցներով: Ան նշած է, թէ իրանահայութիւնը հպարտ եւ ուրախ է այս այցելութեամբ:

Ապա խօսք առած է նախագահ Ռ. Քոչարեան: Ան մեծապէս գնահատած է իրանահայ համայնքը, անոր ունեցած դերն ու տեղը իրանի եւ Հայաստան - Իրան յարաբերութիւններու զարգացման եւ ամրապնդման մէջ: Ան անդադարձած է Հայաստանի եւ Իրանի յարաբերութիւններու մասին:

Սփիւռք յարաբերութիւններուն մասին, նախագահ Ռ. Քոչարեան ըսած է, թէ ոչ մէկ կասկած է Հայաստանի եւ Իրանի յարաբերութեամբ աւելի կը զօրանալ թէ՛ տնտեսապէս եւ թէ՛ քաղաքապէս:

Հանդիպումի աւարտին Սեպուհ Եպս. Սարգիսեան եւ Կորին արք. Պապեան յուշանուէրներ յանձնած են Հայաստանի նախագահին:

Ապա գործադրուած է ինչ եւս եւ անցեալ տարի գեղարուեստական յայտագիր:

ՀԱՅ - ԻՐԱՆԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՈՒժԱՆԻԹԻ ՄԱՐԶԻՆ ՄԷՋ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԽՈՐԱՆԱՅ

Հայաստանի ուժանիւթի նախարար Արմէն Մովսիսեանի կարծիքով, Իրան - Հայաստան կազատարի նախագծային փաստաթուղթերուն մշակումը պիտի աւարտի մինչեւ 2002 թուականի վերջը՝ այդ աշխատանքները պիտի իրականացուին երկու երկիրներու մասնագէտներուն կողմէ:

Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեանի Իրան կատարած այցելութեան շրջագիծին մէջ ուժանիւթի բնագաւառին վերաբերող ձեռք բերուած համաձայնութիւնները ներկայացնելով լրագրողներուն՝ նախարարը նշեց, որ հաւանական է շինարարական աշխատանքներուն մէջ ներգրաւուին այլ երկիրներու ներգրողներ:

Ա. Մովսիսեան նաեւ շնչեց, որ կազին սակը պիտի որոշուի հետագայ բանակցութիւններուն ընթացքին, նշելով, որ իրանցի պատասխանատուները հաւանական կը նկատեն Ռուսիոյ մասնակցութիւնը կազատարի շինարարութեան:

Թեհրանի մէջ ստորագրուած այլ փաստաթուղթի մը համաձայն, նախատեսուած է միասնաբար ընտրել Մեղրիի (Արաքսի) ջրէկէտրակայանի նախագիծի երեք տարբերակներէն մէկը եւ ներդրողներ ներգրաւելէ ետք սկսիլ կառուցումը: Ասկէ զատ, Ա. Մովսիսեանի համաձայն, քննարկուած են նաեւ միացեալ ներդրումներու այլ հարցեր, որոնք մասնաւորապէս կ'առնչուին Հայաստանի ուժանիւթի համակարգի արդիականացման: Համաձայնութիւն ձեռք բերուած է, որ այդ հարցերը պիտի կարգաւորուին հայկական կողմի պահանջարկը ճշգրտելէ ետք:

Ա. Մովսիսեան երկրակցուց, որ Հայաստանի նախագահին Իրան այցելութիւնը Հայաստանի եւ Իրանի միջեւ ուժանիւթի մարզին մէջ աւելի լայն համագործակցութեան հիմքեր դրած է:

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ ՓՈՆԱՆԱԿՈՒՄՆԵՐՈՒ ՄԵԾ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԱՅԱՐՏԱՆԻ ԵՒ ԻՐԱՆԻ ՄԻՋԵԻ

Ըստ Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարար Լեւոն Մկրտչեանի, համալսարանական արտական եւ գիտական կոչումներու վկայականներու փոխադարձ ճանաչման մասին Թեհրանի մէջ ստորագրուած յուշագիրը մեծ կարելիութիւններ ստեղծած է Հայաստանի եւ Իրանի միջեւ ուսանողական, դասախօսական եւ գիտական փոխանակումներու համար:

Լրագրողներու հետ զրոյցի մը ընթացքին Լ. Մկրտչեան նշած է, որ Իրան բարձրագոյն կրթութեան եւ գիտութեան առումով մեծ ներուժ ունեցող երկիր է. նախարարին գնահատումով, Իրանի համար հետաքրքրութիւն կը ներկայացնէ Հայաստանի կրթագիտական համակարգի բնագիտական, ճշգրիտ գիտութիւններու եւ ճարտարագիտական ուղղութիւնները, ուր իրանցի ուսանողներու ներգրաւումը կրնայ ըլլալ իրթաթիւններու ձեւով կրթական ներդրումներու նախադրեալ:

Ան նաեւ տեղեկացուցած է, որ յուշագիրով նախատեսուած դրոյթները պիտի կենսագործուին 2002 թուականի ընթացքին, գործնական աշխատանքային ծրագրի մշակումէն ետք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՐԱՆԻ ԿՈՂԵՆ Է

ՄԵՊՏԵՄԲԵՐ 11ԻՅ ՅԵՏՈՅ ԱՇԽԱՐՀՆ ԻՐՕՔ ՓՈԽՈՒԵԼ Է

Միացեալ Նահանգներին արտաքին գործոց նախարար Քուլին Փառուլլի օգնականի տեղակալ Լին Փասքոն Եւրոպայի անվտանգութեան եւ համագործակցութեան յանձնաժողովի ելոյթում անդրադարձել է ամերիկախորհրդական յարաբերութիւններին: Սեզ համար կարեւորն ամերիկախորհրդական յարաբերութիւնները չեն, այլ կենտրոնական Ասիայում, Հարաւային Կովկասում եւ ընդհանրապէս ամբողջ աշխարհում նոր աշխարհակարգ ձեւաւորելու Միացեալ Նահանգներին նախաձեռնութիւնները: Լին Փասքոն յայտարարել է, որ Մ.Նահանգները չեն մոռանալ պետութիւններին, որոնք Սեպտեմբերի 11ի ահաբեկչութիւնից յետոյ իրենց աշակցութիւնը յայտնեցին Միացեալ Նահանգների հակահաղթական պայքարին: Այս առումով, կենտրոնական Ասիայի բոլոր 5 հանրապետութիւնները, որոնք այս կամ այն չափով գտնուում են Ռուսաստանի ազդեցութեան ոլորտում, միացան Միացեալ Նահանգների հակահաղթական պայքարին: «Երբ Աֆղանիստանում վերջանայ այս հակամարտութիւնը եւ ամերիկեան զօրքերը դառնան հայրենիք, մենք չենք հեռանալ կենտրոնական Ասիայից եւ, անշուշտ, իւրիւրգիտանից», ասել է Փասքոն:

Իր հերթին, Միացեալ Նահանգների արտաքին գործոց նախարարի օգնական էլիզաբէթ Ճոնզը յայտարարել է, որ Սեպտեմբերի 11ից յետոյ աշխարհը փոխուել է, եւ Միացեալ Նահանգներին արտաքին նոր քաղաքականութիւնը պէտք է զարգանայ, որպէսզի յետզման այդ փոփոխութիւններէց ձոնզը, որը նախկինում եղել է Կասպիցի հարցերով Միացեալ Նահանգների արտաքին գործոց նախարարի խորհրդական, անդրադարձել է Միջերկրական - Թուրքիա - Հարաւային Կովկաս - Կենտրոնական Ասիա առանցքին, նշելով. «Այս շրջանի պետութիւնները պէտք է առաւել աշխուժօրէն ներգրգրուեն համաշխարհային տնտեսութեան մէջ՝ օգտագործելով Արեւմուտք - Արեւելք միջանցքը, որն անցնում է Կովկասով»: «Երբ Աֆղանիստանում հակամարտութիւնը ավարտուի, մենք չենք հեռանալ այս շրջանից», ասել է Ճոնզը:

Էլիզաբէթ Ճոնզը յատուկ անդրադարձել է Կասպիցի ուժանիւթի երթուղուն. «Արեւմուտք ուժանիւթը հասնում է Ռուսաստանով, առաքումներին ընդլայնման քաղաքակրթութիւնը կրում է ոչ թէ հակառուսական, այլ՝ հակամենաշնորհային բնոյթ: Ես հպարտօրէն ասում եմ, որ Պաքու - Թիֆլիս - ձէյզան քարիւղատարի շինարարութիւնը կը սկսուի եկող ամիսներ, իսկ 2005 թուականի կասպեան քարիւղը կը հասնի Արեւմուտք»: Տիկին Ճոնզը յիշեցրել է, որ Շահտենիզ հանքավայրից կազմ յոյն երթուղու կը հասնի արեւմտեան ռուկաներ:

Պուլի վարչակազմի բարձրաստիճան պաշտօնեաները, ինքը՝ Միացեալ Նահանգների նախա-

գահը, տարբեր առիթներով շեշտում են, որ հակահաղթական պատերազմը երկար տարիներ կը տեւի, չի աւարտուի Պէն Լատէնի կամ մոլլա Օմարի ձերբակալութեամբ՝ ողջ թէ մեռած: Երէկ այդ մասին յիշեցրեց Միացեալ Նահանգներին պաշտպանութեան քարտուղարի տեղակալ Փօլ Վալֆովիցը: Ընդհանրապէս, ինչպէս նկատում են վերլուծաբանները, Միացեալ Նահանգներին հակահաղթական պատերազմը կ'աւարտուի նոր աշխարհակարգի ձեւաւորութիւնները: Լին Փասքոն յետոյ, երբ Ուաշինկթընն իր քաղաքական, տնտեսական, մշակութային ազդեցութիւնը տարածի ողջ աշխարհի վրայ: Ամերիկացի դիւանագէտ, ԵԱՀԿի Մինսքի խմբի համանախագահ Ռուտովֆ Փերինսկի վերջերս Երեւանում Սեպտեմբերի 11ը անուանեց «յետպաղպատերազմեան ժամանակ շրջանի» սկիզբը: Ինչպիսի՞ն պէտք է լինի Հայաստանին տեղը նոր աշխարհակարգում: Սեպտեմբերի 11ից յետոյ Միացեալ Նահանգների նախագահն աշխարհի պետութիւններին կ'ստորադրէ. «Կամ մեզ հետ էք, կամ ահաբեկիչներէ»: Երեւանն անմիջապէս արձագանգեց Միացեալ Նահանգների վերջնազօրին, ասելով, որ Հայաստանն ահաբեկիչների կողքին չէ: Նոյն բանն արեցին աշխարհի չատ պետութիւններ, այդ թւում նրանք, որոնք անուղղակիօրէն աջակցել են ահաբեկչութեանը, այդ թւում մեր անմիջական հարեւանները՝ Վրաստանը եւ Ազրպէյճանը: Մեր միւս հարեւանը եւ ռազմավարական դաշնակիցը՝ Իրանը, համարձակութիւն ունեցաւ յայտարարելու, որ Թեհրանը ո'չ ահաբեկիչներին, ո'չ էլ Միացեալ Նահանգների հետ է: Բացի Իրանից, աշխարհում եւ մեր անմիջական շրջանում կան պետութիւններ, ինչպէս Ռուսաստանը, Չինաստանը, Հնդկաստանը, որոնք նոր աշխարհակարգում ունենալու են իրենց ինքնուրոյն տեղը՝ Նահանգներում ամբողջ աշխարհը Սպիտակ Տնից կառավարելու յաւակնութիւններին: Աշխարհի տարբեր շրջաններում շարունակուելու է Ռուսաստան - Միացեալ Նահանգներ, Չինաստան - Միացեալ Նահանգներ, Իրան - Միացեալ Նահանգներ ազդեցութիւնները տարածելու պայքարը: Եթէ մէկ հարցում Մոսկուայի եւ Ուաշինկթընի դիրքորոշումները համընկնում են, չի նշանակում, թէ այլ հարցերում նրանք եւս կը համագործակցեն: Այս առումով մեր շրջանը՝ Հարաւային Կովկասը, Միացեալ Նահանգներ - Ռուսաստան պայքարի կիզակէտում է: Այսպէս, Միացեալ Նահանգների պաշտպանութեան քարտուղար Տոնալտ Ռամսֆելտի շրջանային այցը խիտ յատկանշական է: Կարեւոր էին պրն. Ռամսֆելտի Պաքուում, Երեւանում կամ Թիֆլիսում արուած յայտարարութիւնները: Ո՛չ, կարեւորը ինքնին այցն էր: Սա առաջին դէպքն էր, երբ ամերիկացի միւս բարձրաստիճան պաշտօնեան ժամանում է Հարաւային Կովկաս: Անշուշտ,

Ռամսֆելտը ուշագրաւ յայտարարութիւններ արեց, մասնաւորապէս Ազրպէյճանին եւ Վրաստանին խոստացաւ ամերիկեան ռազմական օժանդակութիւն, ինչը չխոստացաւ Հայաստանին: Միացեալ Նահանգների պաշտպանութեան քարտուղարը շրջանցեց հայ լրագրողի հարցը՝ չի՞ պտորաստուում Ուաշինկթընը ճշումներ բանեցնել թուրքիայի վրայ, որպէսզի վերջինս վերադառնալ Հայաստանի շրջափակումը: Պէտք է բացառել, որ Միացեալ Նահանգների արտաքին գործոց նախարարութեան նախաձեռնութեամբ ձեւաւորուած եւ հովանաւորուած «Հայ - Թրքական Հաշտեցման Յանձնաժողով»ը «մահացաւ» հէնց Ուաշինկթընի խորհրդով: Այլապէս արտաքին գործոց նախարարութեան պարտական հայ հաշտարարները դժուար թէ նման խիզախ քայլի դիմէին՝ դադարեցնելով իրենց հետագայ աշխատանքները:

Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքն իրօք իւրաքանուկ է: Մեր երկրի տարածքով են անցնում Հիւսիս - Հարաւ, Արեւելք - Արեւմուտք առանցքերը: Առաջին առանցքը՝ Ռուսաստան - Հայաստան - Իրան - Պարսից ծոց, հասնում է Միացեալ Նահանգների շահերին, երկրորդը՝ Միջերկրական - Թուրքիա - Հարաւային Կովկաս - Կենտրոնական Ասիա, հակասում է Ռուսաստանի, Իրանի, Չինաստանի, Նոյնիսկ ամերիկամէտ Եւրոպայի շահերին: Հէնց այս ենթաթէքստով պէտք է դիտել Տոնալտ Ռամսֆելտի շրջանային այցը: Միացեալ Նահանգների արտաքին գործոց նախարարը Պաքուում, Երեւանում եւ Թիֆլիսում հնարաւորութիւն ունեցաւ մէկ անգամ եւս յօշափելու երեք նորանկախ պետութիւններին ձգտումները:

Սեպտեմբերի 11ից յետոյ աշխարհն իրօք փոխուել է: Միացեալ Նահանգների հակահաղթական պայքարում Հայաստանի տեղը Ռուսաստանի եւ Իրանի կողքին է: Մենք պէտք չենք արտաքին քաղաքական կողմնորոշումներում դնելը Միացեալ Նահանգներ կամ Ռուսաստան ուղղութեան ընտրութիւնը, միեւնոյն ժամանակ հայ - ամերիկեան, Հայաստան - ՕՍԱՆ յարաբերութիւնները պէտք է դրեւէ ձեւով խղճնդոտեն Երեւան - Մոսկուա, Երեւան - Թեհրան յարաբերութիւններին խորացմանը:

Հայ - ռուսական յարաբերութիւններն առանձնապէս կարեւոր են Հայաստանի տնտեսութեան առողջացման, զարգացման, ինչպէս նաեւ երկրի ներքաղաքական կայունութեան համար, իսկ Իրանի արտաքին աշխարհի հետ մեր կապի միակ յուսալի ճանապարհն է:

ԹԱՅՈՒՆ ՅԱՎՈՐԵԱՆ
«Ազգ»

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱՐԱԺԻՆ
●Տըպպայի մէջ, 2015 թ. 150 քառ. մետր տարածութիւն, ԾԱԽԱՅԻՅԱՅ ԴԻՐԵ: ԳԻՄ 39,000 տոլար, կամխիկ: Դժ. 03-605543:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ 2001 ԹՈՒՆԱԿԱՆԻՆ

Հայաստանի արտաքին քաղաքականութեան համար 2001 թուականը կարելի է գնահատել որպէս լուրջ եւ ինչ-որ առումով նաեւ շրջադարձային նշանակութիւն ունեցող ձեռքբերումների շրջան:

Մէկ տարուան ընթացքում հայ դիւանագիտութեանը յաջողութեց լուծել առնուազն երեք կարեւորագոյն խնդիրներ՝ որակապէս նոր մակարդակի բարձրացնել հայ-ռուսական ռազմավարական փոխգործակցութիւնը, ապահովել Հայաստանի մուտքը Եւրոխորհուրդ եւ միաժամանակ՝ հասնել դարաբաղեան հիմնահարցի երկարաժամկէտ ստեղծմանը, հայկական կողմի համար միանգամայն ձեռնտու տարբերակով:

Ղարաբաղեան հիմնահարցի կարգաւորման համար ընթացող բանակցային գործընթացում Հայաստանը կարողացաւ ճիշդ ձեւով 2001 թուականի առաջին կէսին՝ ընդհուպ մինչեւ Սեպտեմբերի 11ը, ողջ աշխարհում ու շրջանում ծաւալուող ռուս-ամերիկեան մրցակցութեան փաստը, որը հանդիսանում էր Փարիզից մինչեւ Քի Ուէսթ բանակցային գործընթացի փակուղի մտնելու խորքային պատճառը: Այդ բանակցութիւններում հանդէս գալով Ազրպէյճանից աւելի մեղմ ու կառուցողական դիրքերից՝ Հայաստանն ապահովեց ոչ միայն Եւրոխորհուրդ մուտք գործելիս իր ստանձնած պարտաւորութիւնների կատարումը, այլեւ Միացեալ Նահանգների միջնորդական առաքելութեան ձախողման պատասխանատուութիւնը Ազրպէյճանի վրայ տեղափոխելու խնդրի լուծումը:

Հէնց այն հանգամանքը, որ Ազրպէյճանն ինքը հրաժարուեց Փարիզում ձեռք բերուած պայմանաւորութեան թիւնները, Արեւմուտքին ընդհանրապէս եւ Միացեալ Նահանգներին մասնաւորապէս զրկեցին Հայաստանի դէմ քաղաքական կամ տնտեսական պատժամիջոցներ կիրառելու համար անհրաժեշտ բոլոր հիմքերից: Եւ դա այն պարագայում, երբ Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը՝ մասնաւոր տարուան երկրորդ կէսին, գնալով աւելի ու աւելի յստակօրէն ռուսական ուղղութեանը հէնց բերում: Արդիւնքում Հայաստանը կարողացաւ հասնել դարաբաղեան հիմնահարցի շուրջ ծաւալուող բանակցային գործընթացի երկարաժամկէտ ստեղծմանը, որը բացառում է մեր հանրապետութեան տնտեսական կամ քաղաքական մեկուսացումը աշխարհում առկա ուժի որեւէ բեւեռից եւ միաժամանակ անհնար է դարձնում պատերազմական գործողութիւնների վերսկսումը Ազրպէյճանի կողմից:

2001 թուականին ձեռք բերուած արտաքին-քաղաքական յաջողութիւնները շարունակութիւնն ու զարգացումը դարձաւ 2001 թուականի Սեպտեմբերի 11ից անմիջապէս յետոյ Հայաստանի համարձակ քայլը՝ Ռուսաստանի հետ քաղաքական ու մասնաւոր տնտեսական փոխգործակցութեան բարձրացումը որակապէս նոր մակարդակի: Մինչեւ Սեպտեմբերի 11ը Հայաստանի նման քայլը Արեւմուտքում կարող էր գնահատուել որպէս հրաժարում պաշտօնապէս հոշակուած իրար ամբողջացման սկզբունքից՝ դրանից բխող բոլոր բացասական հետեւանքներով հանդերձ: Այդ քայլով ոչ միայն բացուեցին նոր հեռանկարներ երկրի տնտեսութեան, մասնաւոր աղբիւնաբերութեան զարգացման համար, այլեւ կանխաւ չէզոքացուեցին յետսեպտեմբերտասնմէկեան անկայուն ու յեղեղուկ աշխարհաքաղաքական կացութիւնն օգտագործելու եւ Հայաստանի դէմ ռազմական գործողութիւններ սանձազերծելու Ազրպէյճանի նկրտումները:

Վերջին փաստը ամէնքի համար ակնյայտ դարձաւ այն բանից յետոյ, երբ անգամ Ազրպէյճանի միակ հաւատարիմ դաշնակից Թուրքիայի անվտանգութեան խորհրդի քարտուղարը նախազգուշացրեց իր ազըրպէյճանցի գործընկերներին՝ Ղարաբաղի դէմ ռազմական գործողութիւնները վերսկսելու պարագայում ոչ միայն Հայաստանի, այլեւ նրա թիկունքում կանգնած Ռուսաստանի հետ գործ ունենալու հեռանկարից:

Հայաստանը 2001 թուականի մտաւ որպէս դարաբաղեան հակամարտութեան առկայութեան պատճառով գերտէքութիւնների մրցակցութեան թատերաբեմի վերածուած եւ միջազգային մեկուսացման լուրջ վտանգի առջեւ կանգնած երկիր: Հայաստանը 2002 թուական է մուտք գործում որպէս Եւրոխորհրդի լիիւրաւ անդամ, իսկ Եւրոմիութեան ընդլայնման պարագայում՝ շրջանում այդ կազմակերպութեան գործակից անդամը դառնալու ամենահաւանական թեկնածու համարուող երկիր: Դրան զուգահեռ, Հայաստանը կտրուկ բարձրացրել է իր փոխգործակցութեան նշանոցը Ռուսաստանի ու Իրանի հետ եւ պայմաններ է ստեղծել սեփական փոխադրական - հաղորդակցական շրջափակումը վերջնականապէս յաղթահարելու համար: Միաժամանակ Հայաստանն ու Արցախը ոչ մի թիզ հող չեն զիջել 1994 թուականի միջինեան զինադադարի արդիւնքում ձեռք բերուածից, բայց դրան զուգահեռ յաջողութեամբ չէզոքացրել ու շրջափակել են ռազմական գործողութիւններ վերսկսելու Ազրպէյճանի բոլոր փորձերը:

Այս բոլոր փաստերն ու փաստարկները հիմք են տալիս եզրակացնել, որ 2001 թուականը Հայաստանի արտաքին քաղաքականութեան համար լուրջ յաջողութիւնների ու ձեռքբերումների տարի էր:

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ
«Հայոց Աշխարհ»
www.lemagan.com

SULՈՒ ԸԱՃՈՅԸ...

Տօնական օրերու տօնավաճառային այս մթնոլորտին մէջ գնումներու եւ նուէրներ առնելու առօրեայ հերթը կլանած է բոլորս: Իւրաքանչիւր ծայնասփիւռի եւ հեռատեսիլի կայանէ, ինչպէս նաեւ տպագիր մամուլի էջերուն մէջ գիրքար կը հրմշտկեց զեղչ-վաճառքի ծանուցումները: Ամէն կողմէ կը լսուին Ս. Մնուկիի եւ Ամեհրի երգեր: Հանրային շէնքերը, գրասենյակները (ներառեալ «Ասպարէզ»ի խմբագրատունը) եւ բնակարանները տօնական գարդարանքներով աչքի կը զարնեն:

Նոյնիսկ փողոցներու եւ մայրուղիներու խնդուր աւելցած է: Իսկ «մոլ»երու իրարանցումը, ամէն տարուան նման, հասած է առասպելական չափերու:

Ամէն մարդ վազքի մէջ է նուէրներ առնելու: Մեքք բացառութիւն չենք եւ հաւանաբար բնական է, որ բացառութիւն չլլանք: Բայց... պէ՛տք է ըլլանք: «Բացառութիւն»ը լայն իմաստով, որ արդեօք ճիշդ պիտի չլլա՞ր մեր գնելիք նուէրներու թիւը պակսեցնելը, կամ առնուազն՝ «շատ սուղոց»իմ տեղ «բնական» գինով նուէր մը գնելը:

Որպէսզի գէթ այս օրերուն յիշենք մեր գաղութին մէջ գործող ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ քաղաքական, բարեսիրական, մարգական, մշակութային, կրթական եւ այլն: Ոչ միայն յիշենք, այլեւ նուէրներէ մեր խնայելիք գումարը նուիրենք մեր նախասիրած եւ գաղութի բարօրութեան նուիրուած կազմակերպութեան մը:

Բաղը գլխագիրով գրեցիմք, որովհետեւ հրապարակի վրայ են նաեւ անհատներ, որոնք բարի գործ ընելու յաւակնութեամբ ճամբայ ելած են: Հաւանաբար պարկեշտ են. հարց չուցինք: Սակայն միշտ աւելի ճիշդ է հաւաքական նախաձեռնութիւնները քաջալերելը, քան անհատակները:

Շատ են այն կազմակերպութիւնները, որոնք կը գործեն եւ արդիւնք կու տան բացառապէս գաղութին գործնական զօրակցութեան շնորհիւ: Մեր անմիջական ուշադրութեան կիզակէտին վրայ են այս շարքի կազմակերպութիւնները, որոնք նուիրուած են Հայ Դատին, հայ մշակոյթին, ժողովուրդի ընկերային-կրթական կարիքներուն եւ այլն:

Տօնական այս օրերուն գէթ, տալու հանդիքով չհարստացնե՞նք մեր հոգիները:

ՎԱՉԷ ԲՐՈՒՏԵԱՆ
«Ասպարէզ»

Armenian products
Gifts For Any Occasion



Address : Bourj Hamoud, Municipaliic Street, Facing Center Arine, # 63 Street Fax: 01/254747 Tel.: 01/254747 - 03/348105, E-mail: tammy@lynx.nct.lb

www.hamazkayin.com

Ա Յ Ի Լ

ԻՆԵՆԱՇԱՐԺԻ ԱՊԱՆՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ



●SOS FREE OF CHARGE
ԻՆԵՆԱՇԱՐԺԻ ՓՈԽԱԳՐՈՒԹԵԱՆ
ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆԸ ԶՐԻ

ՀԱՍՅԷ.- ԱՅԵՏԻ ԶԵՆԸ Բ. ՅԱՐԿ
ՀԵՌ. 01-242556 եւ 01-242557

Հրիարութ 2000 Մարտ Ետք

ԲԵԹՂԵՀԷՄԻ ԱՍՏՂԸ՝ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԻՆ ԱՆԽԱՆՇԱԼՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ ԲԱԶՄԱԹԻ ԿԱՐԾԻԵՆԵՐ ԿԱՆ. ՍՏՈՐԵՒ՝ ԱՅԼ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՍԸ



Եթէ Աստուած երկինք էր եւ տիեզերքը կը ղեկավարեր, ինչո՞ւ սկիզբէն ճշամ ծը չէր տուած, թէ իր միակ որդին պիտի ուղարկէր աշխարհ:

Փայլէ, փայլէ, փոքրիկ աստղ, արդեօք ի՞նչ ես դուն», կ'ըսէ օրօրոցի արեւմտեան հին երգը: Սակայն թե՛րեւս արդի տարբերակը պէտք է կարդալ՝ «Փայլէ, փայլէ, փոքրիկ աստղ, արդեօք ի՞նչ էիր դուն»: Ոչ միայն այն պատճառով, որ այլեւս աստղերը նոյնքան չեն փայլիր, որքան երբ մարդը առաջին անգամ տեսած է զանոնք, այլ նաեւ՝ որովհետեւ խորհրդաւոր մեծ առեղծուած մը կը դառնայ աստղի մը շուրջ եւ զայն փնտրել կու տայ Քրիստոսի ծննդեան ժամանակ:

Առեղծուածը կը սկսի Մատթէոսի Աւետարանով եւ դէպի արեւելք առաջնորդուած մոգերուն պատմութեամբ: «Եւ ահա արեւելքի մէջ տեսան աստղը, որ կ'երթար իրենց առջեւ, մինչեւ որ հասաւ եւ կանգ առաւ հոն, ուր մանուկը ծնած էր»:

Աստղագէտներ, աստղաբաշխներ եւ քրիստոնեաներ երկար ժամանակ հարց տուած են, թէ այս նախանշանը ո՞ր երեւցած է: Այլ աւետարաններ չեն յիշատակեր զայն: Այսուհանդերձ Քրիստոսի ծննդեան պատմութեան մէջ սակաւաթիւ երեւոյթներ նոյնքան հետաքրքրութիւն ստեղծած են, որքան՝ Մատթէոսի այս հակիրճ ակնարկութիւնը: Նորագոյն տեսութիւնը կը պատկանի Բրիտանիոյ մէջ ամէնէն աւելի յարգուած աստղագէտ սըր Փեթրիք Մուրի, որուն «Տը սթար աֆ Պեթլեհեմ» գիրքը լոյս տեսած է 2001ի Սեպտեմբերին:

Սըր Փեթրիք գիտական մօտեցում կը ցուցարբէրէ հարցին: Ան կը քննէ աստղագիտական շարք մը կարելիութիւններու առկայութիւնը. օրինակ՝ մոլորակներու, նոր գերաստղի մը եւ գիսաւոր աստղի մը միատեղ հանդիպումը, ապա կ'ուսումնասիրէ ա՛յն վարկածը, որ կը կարծէ, թէ ամէնէն աւելի կը յարմարի պատմութեան: Ան շատ հաւանական կը նկատէ, որ քանի մը աստղներ կամ «մեռնող աստղեր» իրենց աւերակոյտը տարածած են երկրագունդին արտաքին խաւին վրայ՝ արտասովոր լոյս սփռելով: Սակայն նման բացատրութիւն մը շատ սովորական է խորհրդանշական առեղծուած մը լուծելու համար:

Աւստրիացի հռչակաւոր աստղագէտ Եոհանս Քեփլըր, այն գիտնականը, որ ապացուցած է, թէ մոլորակները արեւուն շուրջ կը դառնան ոչ թէ բոլորակ, այլ ձուսձեւ շրջան մը ընելով, ենթադրած է, թէ Բեթղեհէմի աստղը հաւանաբար նոր աստղ մը կամ նոր գերաստղ մըն է, որ լուսաշող փայլքով մը մեծցած է: Ան անձամբ նմանօրինակ հրաշագեղ աստղ մը տեսած է 1604ին. փորձառութիւնը զայն մղած է զուգահեռ մը գծելու:

ԹԵՐԵՒՍ ԱՌԻՆԹՄՈՒ

Քեփլըրէն ետք Բեթղեհէմի աստղին նկատմամբ հետաքրքրութիւնը մարած է նոյնինքն գերաստղի մը պէս: Սակայն անիկա դարձեալ սրած է վերջին տարիներուն: Սըր Փեթրիքի ուսումնասիրութենէն առաջ հրատարակուած երկու գիրքեր հակադիր տեսութիւններ կը ներկայացնէին: 1999ին բրիտանացի աստղաբանագէտ Մարք Քիճըր իր «Տը սթար աֆ Պեթլեհեմ». եւ ասքրոնոմըր՝ Գ Վիտ» գիրքին մէջ կը պաշտպանէր նոր աստղի մը յայտնութեան տեսութիւնը: Սակայն Քիճըրի համաձայն, Բեթղեհէմի աստղը պարզապէս նոր աստղ մը չէր, այլ՝ նոր աստղի մը եւ մոլորակային տարբեր ճանդիպումներու մէկընդում մը, որ դարեւ առաջ մոգերը առաջնորդած էր դէպի Բեթղեհէմ: Ան կը նկարագրէր նոր աստղ մը, որ Արծիւի համաստեղութեան մէջ յայտնուած էր Ն. Ք. 5 թուականին, ինչպէս նաեւ՝ մոլորակային արտասովոր հանդիպումներու շարք մը, որ երկարած էր Ն. Ք. 7էն Ն. Ք. 6ի միջեւ: Քիճըրի գիրքին հրապարակումէն անմիջապէս ետք, նոյն տարին, լոյս տեսած էր այլ ուսումնասիրութիւն մը. ամերիկացի աստղագէտ Մայքըլ Մոլնար իր «Տը սթար աֆ Պեթլեհեմ». տը լիկըսի աֆ տը մակի» գիրքին մէջ տարբեր տեսութիւն մը կը պարզէր: Ան կը վիճէր, թէ աստղաբաշխներ եւ ոչ աստղագի-

ծային ախթարքի համաստեղութիւններուն եւ մոլորակներուն ու արեւուն հանդիպակաց դիրքին, մանաւանդ՝ մարդկային նոր ծնունդի մը պահուն:

Մոլնար անդրադարձած է, թէ խոյը (21 Մարտէն 20 Ապրիլ երկարող ժամանակին աստղաբաշխական խորհրդանիշը) աւանդաբար յատուկ նշանակութիւն ունի հրեաներուն համար: Ապա ան յայտնաբերած է, թէ Լուսնթագը՝ մոլորակներուն թագաւորը լուսնային խաւարումի մէջ եղած է 17 Ապրիլ Ն. Ք. 6ին, այսինքն՝ ճիշդ այն ժամանակ, երբ կը գտնուէր արեւելքի մէջ: Հետեւաբար խելացի ոեւէ անձ այս իրադարձութիւնը տեսնելով պիտի եզրակացնէր, թէ թագաւոր մը ծնած էր կամ պիտի ծնէր հրեաներուն մէջ:

Սըր Փեթրիք ասուպնեբու առն հեղեղ մը կը թափէ այս տեսութեան վրայ՝ մատնանշելով, որ 17 Ապրիլ Ն. Ք. 7ի խաւարումը տեղի ունեցած է ցերեկին եւ ոչ ոք պիտի կարենար տեսնի զայն, որքան ալ խելացի ըլլար ան: Այսուհանդերձ երեք մասնագէտները համաձայն են գէթ մէկ տեսութեան շուրջ. երեք մոգերը տեսած են բան մը, բայց ոչ՝ Օ թուականի 25 Դեկտեմբերին: Իրականութեան մէջ Քրիստոս ծնած է «Նախքան Քրիստոսէ» չորս կամ հինգ տարի առաջ: Հետագային օրացոյցներ կազմուած են Քրիստոսի ծննդեան թուականի մը հիման վրայ: Մոլնար կ'ենթադրէ, թէ ան ծնած է 17 Ապրիլին, սըր Փեթրիք կը նախընտրէ Փետրուարը:

ՄՈԼՈՐԱԿՆԵՐՈՒ ՈՒԺԸ

Աստղաբաշխութեան հաւատալը պայման չէ ընդունելու համար, որ անիկա մեծ դեր ունէր հնադարեան ժամանակներու կեանքին մէջ: Նոյնիսկ սըր Փեթրիք, անշեղ գիտնական մը, կ'ըսէ՝ «Միտը պէտք է նկատի ունենալ աստղին գուտ աստղաբաշխական կարեւորութիւնը եւ ընդունիլ, թէ մոգերը ամէն բանէ առաջ աստղաբաշխներ էին»:

Աստղագիտութիւնը եւ աստղաբաշխութիւնը անբաժանելի կապով մը միաձուլուած են աշխարհի վրայ մարդկային կեանքին գրեթէ սկիզբէն: Քրիստոսէ առաջ աստղաբաշխութիւնը կեդրոնացած էր այդ ժամանակներուն ծանօթ մոլորակներուն (Լուսնթագ, Հրատ, Փայլածու, Երեւակ, Արուսեակ), ինչպէս նաեւ՝ արեւուն ու լուսնին շարժումներուն վրայ: Ասոնք միասնաբար կը կազմէին հռոմէացիներուն «շարժուն 7 աստղերը»: Աստղաբաշխներ կ'ուսումնասիրէին անոնց կապը «կայուն աստղերու» հետ. կայուն՝ իրարու հանդիպակաց դիրքի մէջ: Այս բոլորը հում նիւթ էին աստղաբաշխներուն համար:

Ազդեցիկ աստղագէտ Բլաւտիուս Պտղեմի, որ Յ. Ք. 2րդ դարուն ապրած է Աղեքսանդրիոյ մօտակայ շրջանի մը մէջ, հեղինակն է ցարդ օգտագործուող «Թեքրապիպոս» աստղաբաշխական գրութեան: Ան այնքան հաւատք կ'ընծայէր աստղաբաշխական հիմունքներուն, որ նաեւ գրած է տարօրինակ բան մը. «Երբ Արուսեակը միանայ Հրատի եւ նոյն ատեն ներկայանայ Լուսնթագը, իսկ Հրատը ըլլայ արեւուն ճառագայթներուն տակ, այդ պահուն կիններ սեռային յարաբերութիւն պիտի ունենան իրենց ծառաներուն հետ կամ աւելի ցած խաւի մարդոց հետ, նոյնինքն՝ օտարներու կամ զատարկապորտներու հետ»: Բլաւտիուս Պտղեմի մարդկութիւնը կը զգուշացնէ մոլորակներու նման հանդիպու-

Սակայն ատիկա Պայըրնի օրերուն էր, ոչ հիմա: Դիցարանութեան եւ իրականութեան եզրերուն նուիրուած «Տը սթար փիլի» գիրքին հեղինակը՝ Փիթըր Լուս, 1932ին հետեւեալ կը գրէր աստղերու պատկերացումին մասին. «Աստղերու մօտիկութեան եւ մարդկային կեանքի մէջ անոնց դերակատարութեան զգացողութիւնը կորսուած է»:

Այսօրեան աստղագէտները նոյնիսկ աստ-

խութեան, անիկա շարաթաթերթերու բնագաւառն է եւ ընդհանրապէս՝ արհամարհուած:

Անշուշտ աստղաբաշխութիւնը նաեւ բազմաթիւ դժուարութիւններ կը յարուցէ: Անոր հիմը դրուած է Պղուտոնի յայտնաբերումէն (1930) շատ առաջ. այս փոքր մոլորակը կը գտնուի արեգակնային դրութենէն հեռու եւ «զայրոյթ» պատճառելու աստիճան կը թաւալի նաեւ ախթարքէն դուրս: Աւելի՛ն. համաստեղութիւններու միջեւ արեւուն թաւալումին աստղագիտական թուականները չեն համապատասխաներ աստղաբաշխութեան մէջ նշուած թուականներուն:

Օրինակ, արեւը խոյի համաստեղութեան մէջ կը գտնուի 18 Ապրիլէն 14 Մայիսի միջեւ, սակայն խոյի աստղը կ'ընդգրկէ 21 Մարտէն 20 Ապրիլ երկարող ժամանակը: Կարելի է վիճել, թէ Մոլնարի ենթադրած Ն. Ք. 6 թուականի լուսնային խաւարումը տեղի ունեցած է, երբ արեւը կը գտնուէր Ձուկերու համաստեղութեան մէջ: Ժամանակ մը, որ յատուկ նշանակութիւն չունի հրեաներուն համար:

Այսուհանդերձ, հակառակ նման դժուարութիւններու, աստղաբաշխութիւնը արժէքաւոր գիտութիւն մըն է, մանաւանդ՝ որովհետեւ կ'օգնէ հասկնալու, թէ հին ժամանակներուն մարդիկ ի՞նչպէս կ'ըմբռնէին աշխարհը, եւ մասնաւորաբար գիտնալու, թէ Մատթէոս աւետարանիչը ի՞նչ բանի կ'ակնարկէր, երբ գրած է Բեթղեհէմի աստղին մասին: Իօրօք, Բրիտեան աստղագիտութենէն աւելի աստղաբաշխութիւնը պատասխանի մը հիմք կ'ընայ դէն:


ՄԱՏԹԵՈՍԻ ԵՐԿԱՍՅՈՐԻ ՏԱԳՆԱԳՈՐ

Հետեւաբար երեւակայեցէ՛ք հետեւեալը. Քրիստոսի մահէն տասնամեակներ ետք Մատթէոս աւետարանիչ կը փորձէ հրեաները համոզել, թէ Քրիստոս իրապէս մեծիւն էր, Աստուծոյ որդին: Զայն լսողներուն մէջ քիչ մը խելացի մէկը հարց պիտի տար. եթէ Աստուած երկինք էր եւ տիեզերքը կը ղեկավարէր, ինչո՞ւ սկիզբէն նշան մը չէր տուած, թէ իր միակ որդին պիտի ուղարկէր աշխարհ: Երկրի վրայ ամէն ինչ, կիներու եւ դատարկապորտներու յարաբերութենէն մինչեւ հզօր գետերու ողողումին նախատեսութիւնները կարելի էր կարգալ աստղերուն մէջ. իսկ Քրիստոսի ծնունդը, մարդկային պատմութեան այս մեծ իրադարձութիւնը, ինչպէս զայն կը նկարագրէր աւետարանիչը, կարելի չէ՞ր տեսնել աստղերուն մէջ:


Մատթէոս աւետարանիչ ստիպուած էր Արուսեակի եւ Հրատի ամէնօրեայ հանդիպումէն շատ աւելի հզօր բանի մը մասին մտածել եւ զարկ տալ իր երեւակայութեան՝ աստղաբաշխական պատասխան մը տալու համար: Ասիկա կը բացատրէ, թէ ինչու միայն ի՛ր աւետարանը կը պատմէ աստղին մասին (որովհետեւ հարցումը ուղղուած է իրեն), եւ ինչու աստղագէտներ մինչեւ այսօր չեն կրնար բացատրել այն իրադարձութիւնը, որուն կ'ակնարկէ ան:

Նման փորձութիւններէ կը ծնին յաւիտեական խորհուրդներ: Բեթղեհէմի աստղին այս բացատրութիւնը անշուշտ անընդունելի է Հին ու Նոր Կտակարանները տառացիօրէն կարդացող հաւատացեալներուն համար: Սակայն ուրիշներ տրամաբանական պիտի համարէին զայն:

ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ ԹԻՒ (ՄԻԼԻՈՆՈՎ)



Պատրաստեց՝ Լ. ԿԻՒԼՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ



տական իրադարձութիւն մը առաջնորդած էր մոգերը, Թերեւս Մոլնարի տեսութիւնը լաւագոյնը չէ, սակայն անիկա կը բովանդակէ լաւագոյն պատմութիւնը:

Մոլնար 1990ին գնած է հռոմէական հին մետաղադրամ մը, որուն վրայ պատկերուած է խոյ մը, որ ետեւ դարձած՝ կը դիտէ աստղ մը: Թատկանշականը այն է, որ խոյը ախթարքի համաստեղութիւններէն մէկը կը խորհողանշէ. իսկ ախթարքը համաստեղութիւններուն ալն գօտին է, որուն մէջ կը թաւալին մոլորակները: Աստղաբաշխներ մեծ կարեւորութիւն կ'ըն-

մի մը կրկնութենէն:


Նաեւ չինացիք միաձուլած են աստղագիտութիւնն ու աստղաբաշխութիւնը: Չինացի աստղագէտներ Հայէյի գիտաստղ գիտած են Ն. Ք. 240ին: 20 տարեկան Շիհ Հուանկ կայսրը հրամայած է այրել բոլոր գիրքերը եւ պահել միայն անոնք, որոնք կը վերաբերէին երկրագործութեան, բժշկագիտութեան եւ աստղաբաշխութեան. միակ գիտութիւնները, զորս կայսրը օգտակար կը նկատէր մարդկութեան համար: Հնադարեան բոլոր քաղաքակրթութիւնները կ'ենթադրէին, թէ երկնային իրա-

դադիտարան չեն երթար, ոչ ալ երկինք կը նային մերկ աչքով, այլ զայն «կը դիտեն» համակարգիչի պատասխանի վրայ՝ հեռուէն սփռուած: «Տի էքրոնմիսք» թերթը այս տարւան սկիզբը կը գրէր. «Ցաւ պատճառելու աստիճան սակաւաթիւ են այն աստղագէտները, որոնք գիտեն աստղի մը կամ համաստեղութեան մը անունը»: Աստղագիտութիւնը վերածուած է անջրպետի հեռաւոր սահմաններուն տեսաբանական բնագիտութեան: Անիկա դուրս է բաց երկինքի տակ աստղերը դիտելու գիտութենէն: Ինչ կը վերաբերի աստղաբաշ-

ՄԱՐԶԱԿԱՆ



ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹԳՈՂԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Հ. Մ. Ը. Մ. - ՌԱՍԻՆԿ 1 - 1

Լիբանանի ֆուտբոլի ախոյեանութեան 4րդ հանգրուանին, Հ. Մ. Ը. Մ. ֆուտբոլի ներկայացուցչական կապմը Շաբաթ, 29 Դեկտեմբերին ի վերջոյ յաջողեցաւ նշանակել 2001 - 2002 եղանակի իր առաջին կողմը, երբ Ռասինկի դէմ մրցումին Մահմուտ Թահհան փենայթիով նշանակեց հաւասարութեան կողմը (43րդ): Ետկոսլա վլատիմիր Փախսեիչ ձեռք ձգած էր փենայթին: Նախքան իր այս կողմը նշանակելը Թահհան Ա. կիսախաղին կորսնցուց երկու ստոյգ առիթներ (19րդ եւ 44րդ վայրկեաններուն), իսկ Բ. կիսախաղին ան կորսնցուց կոլ նշանակելու շատ աւելի ստոյգ առիթ մը (61րդ վայրկեանին), երբ առանձին մնաց Ռասինկի բերդապահին հետ, սակայն անբացատրելիօրէն ուշացաւ եւ ... կորսնցուց գնդակը:

Հակառակ անոր որ Ռասինկի կողմը կարելի է նկատել բախտաւոր (38րդ վայրկեանին), սակայն անիկա այլ կողմեր ալ պիտի նշանակէր, եթէ բերդապահ Սաֆօ Էսթիֆան ճշգրիտ միջամտութիւններով հանդէս չգար:

Հ. Մ. Ը. Մ. ֆուտբոլի օտարականներէն յետսալի Թումաս Պիորը (Շուէտ) յաւապէս կը կատարէ իր պաշտօնը, մինչ մնացեալ երկուքը՝ ետկոսլաւներ վլատիմիր Փախսեիչ եւ Փեթար Պապիչ չորրորդ մրցումն ըլլալով «բօսաշրջիկներ» են դաշտին վրայ:

Կոլերով հարուստ մրցումէ մը ետք վերջ գտաւ Անսար - Սամէս հանդիպումը՝ ի նպաստ երկրորդին, որ 4 - 3 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց, շնորհիւ Վարդան Ղապարեանի նշանակած կոլին (88րդ): Անսարի մարպիկ Փիթըր Փրոսպար հէթըրիք մը իրագործեց:

Հ. Մ. Մ. կրեց եղանակի իր երրորդ պարտութիւնը, Ախա Աիլի Ալէյի եւ Աիլի Սայտայի նման: Անիկա 2 - 0 արդիւնքով պարտուեցաւ Թատամոն Սուրէն: Նըսրաթ Ժամալ նշանակեց հարաւի կապմին երկու կոլերը:

Նրժմէ յաջորդաբար երկրորդ մրցումն ըլլալով 3 - 0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց. անիկա պարտութեան մատնեց Սայտան:

Ստորեւ՝ 4րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.	
Հ. Մ. Ը. Մ. - Ռասինկ	1 - 1
Պըրժ - Ախա Աիլի Ալէյ	1 - 0
Անսար - Սամէս	3 - 4
Աիլի Սայտա - Նըժմէ	0 - 3
Սաֆա - Սայամ	1 - 3
Հ. Մ. Մ. - Թատամոն Սուր	0 - 2
Շապապ Սահէլ - Ախտ	1 - 1

Ստորեւ՝ դասաւորումը (փակագիծին մէջ նշուած է 3րդ հանգրուանին անոնց գրաւած դիրքերը).

	Կէտ
1.- Սալամ (առաջին)	10 (10 - 3)
2.- Սամէս (4րդ)	10 (14 - 11)
3.- Շապապ Սահէլ (3րդ)	8 (5 - 2)
4.- Նըժմէ (7րդ)	7 (10 - 5)
5.- Թատամոն Սուր (8րդ)	7 (6 - 2)
6.- Պըրժ (9րդ)	7 (6 - 4)
7.- Սաֆա (2րդ)	7 (6 - 5)
8.- Ահտ (5րդ)	6 (6 - 5)
9.- Անսար (6րդ)	5 (6 - 6)
10.- Ռասինկ (11րդ)	2 (4 - 7)
11.- Հ. Մ. Ը. Մ. (12րդ)	2 (1 - 5)
12.- Հ. Մ. Մ. (10րդ)	1 (1 - 5)
13.- Ախա Ահլի Ալէյ (13րդ)	1 (2 - 8)
14.- Ահլի Սայտա (14րդ)	1 (2 - 10)

Ստորեւ՝ 5րդ հանգրուանի մրցումներուն յաւտագիրը (անիկա կրնայ ենթարկուիլ որոշ փոփոխութիւններու, ֆուտբոլի ֆետերասիոնին ժողովէն ետք).

ՇԱԲԱԹ, 5 ՅՈՒՆՈՒԱՐ 2002	ԺԱՄ	ԴԱՇՏ
Պըրժ - Ահլի Սայտա	2:15ից	Սաֆա
Հ. Մ. Մ. - Ահտ	2:15ից	Պուրճ
		Համուտ
Նըժմէ - Սաֆա	6:00ից	Մարգակամ Աւամ
ԿԻՐԱԿԻ, 6 ՅՈՒՆՈՒԱՐ		
Ռասինկ - Ախա Ահլի Ալէյ	2:15ից	Ժուհիէ
Անսար - Հ. Մ. Ը. Մ.	2:15ից	Պէյրուք
Շապապ Սահէլ - Սամէս	2:15ից	Մարգակամ Աւամ
Սալամ - Թատամոն Սուր	2:15ից	Թրիփոլի

ԱՆԳԼՈՅ ՃՈՒԹՊՈՂԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐՍԵՆԱԼ ԳՐԱԲԵՑ ՊԱՐԱԳՈՒԽԻ ԴԻՐՔԸ

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 20րդ եւ դարձի առաջին հանգրուանի մրցումներուն, Արսենալ 2-1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Միտլըվպորտն, Նիւքեմսթընի խլացող պարագր-լուսի դիրքը, շնորհիւ իր ունեցած աւելի նպաստաւոր կոլէճիւրէն: Նիւքեմսթըն, որ Չելսիի հիւրն էր (6րդ), 2-1 արդիւնքով պարտութիւն մը կրեց անկէ:

«Հայաբրի»ի մէջ տեղի ունեցած մրցումին, որուն ներկայ էր 38 հազար համակիր, Արսենալի կոլերը նշանակեցին Ռուպեր Բիլթս (55րդ) եւ Էլի Բու (80րդ), իսկ Միտլըվպորտի կոլը՝ Նոել Ուիլըն (22րդ):

Նիւքեմսթըն - Չելսի մրցումին երեք կոլերն ալ նշանակուեցան Ա. կիսախաղին: 52 հազար համակիրներու ներկայութեան՝ Էլըն Շիրըր նշանակեց Նիւքեմսթընի կոլը (37րդ), իսկ իսլանտացի Էյտիւր Կուտեոնսըն՝ Չելսիի կոլերը (35րդ եւ 45րդ):

Լիծ Բարձրացաւ 3րդ դիրքը, 1-0 արդիւնքով յաղթական վերադառնալէ ետք Սաութհէմթընի դաշտին: Մրցումին աւարտէն մէկ վայրկեան առաջ Լի Պոլըր նշանակեց Լիծի եւ մրցումին «որ» կոլը:

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք Լիծ մէկ կէտով գերապանցեց Լիվըրփուլը, որ Ուէսթ Համի հետ (11րդ) 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելէ ետք նախանցեց 4րդ դիրքը: Մայքըլ Օուըն, որ նշանակեց իր կապմին հաւաւարութեան «փրկարար» կոլը (88րդ), Լիվըրփուլի հետ նշանակած եղաւ իր 100րդ կոլը: Ա. կիսախաղին, Ուէսթ Համ 1-0 արդիւնքով յառաջացած էր, շնորհիւ Թրեւոք Սինքլէրի նշանակած կոլին (39րդ): Լիվըրփուլ մրցում մը պակաս կատարած է եւ յաղթանակի մը պարագային կը վերագրաւէ պա-

րագրուի դիրքը:

5րդ դիրքը գրաւող Մանչեսթըր Եունայթըտ 3-2 արդիւնքով յաղթական վերադարձաւ Ֆուլհէմի դաշտէն, արձանագրելով յաջորդական իր 5րդ յաղթանակը: Անիկա այժմ երեք կէտով ետ կը մնայ Արսենալէն: Ռայըն Կիլկ (5րդ եւ 47րդ) եւ Ռուտ Վան Նիսթըրըն (44րդ) նշանակեցին Մանչեսթըրի կոլերը:

●Ստորեւ՝ 20րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.	
Արսենալ - Միտլըվպորտ	2-1
Ասթոն Վիլա - Թոթենհամ	1-1
Պլեյպարն - Տերպի Բաունթի	0-1
Պոլթըն - Լայպըր Սիթի	2-2
Էվըրթըն - Չարլթըն	0-3
Իփսուիչ - Սանտրլէյնտ	5-0
Նիւքեմսթըն - Չելսի	1-2
Սաութհէմթըն - Լիծ	0-1
Ուէսթ Համ - Լիվըրփուլ	1-1
Ֆուլհէմ - Մանչեսթըր Եունայթըտ	2-3

Ստորեւ՝ դասաւորումը, 2001 տարուան աւարտին.

	Կէտ
1. Արսենալ	39 (41-24)
2. Նիւքեմսթըն	39 (38-25)
3. Լիծ	38 (30-17)
4. Լիվըրփուլ	37 (29-19)
5. Մանչեսթըր Եունայթըտ	36 (48-30)
6. Չելսի	33 (31-16)
7. Թոթենհամ	28 (31-27)
8. Ասթոն Վիլա	28 (26-25)
9. Չարլթըն	26 (24-22)
10. Սանտրլէյնտ	26 (17-22)
11. Ուէսթ Համ	25 (25-31)
12. Ֆուլհէմ	24 (19-20)
13. Էվըրթըն	23 (23-28)
14. Պլեյպարն	22 (25-25)
15. Պոլթըն	22 (23-31)
16. Միտլըվպորտ	19 (18-28)
17. Սաութհէմթըն	19 (19-31)
18. Տերպի Բաունթի	19 (15-35)
19. Իփսուիչ	18 (24-28)
20. Լայպըր Սիթի	16 (14-36)

ՍՏՈՐԵՒ՝ 21րդ հանգրուանի մրցումներուն յաւտագիրը.

ԵՐԵՐՇԱՐԹԻ, 1 ՅՈՒՆՈՒԱՐ 2002
Չարլթըն - Իփսուիչ
Չելսի - Սաութհէմթըն
Լիծ - Ուէսթ Համ
Լայպըր Սիթի - Արսենալ
Լիվըրփուլ - Պոլթըն
Միտլըվպորտ - Էվըրթըն
Սանտրլէյնտ - Ասթոն Վիլա
Թոթենհամ - Պլեյպարն
ՉՈՐԵՐՇԱՐԹԻ, 2 ՅՈՒՆՈՒԱՐ
Տերպի Բաունթի - Ֆուլհէմ
Մանչեսթըր Եունայթըտ - Նիւքեմսթըն

ԷՆՏԻ ՔՈՒ ՄԻԱՅԱԻ ՊԼԷՔՊԵՐՆԻ

Անգլիոյ ֆուտբոլի ազգային խումբին միջազգային յառաջապահ էնտի Բոլ շաբաթավերջին լեք Մանչեսթըր Եունայթըտը եւ միացաւ Պլեյպարնի, երեքուկէս տարուան պայմանագրութիւն մը ստորագրելով անոր հետ: Անոր փոխանցման համար Պլեյպարն Մանչեսթըրի վճարեց 11,5 միլիոն տոլար: Եունայթըտը 1995ին Նիւքեմսթընի Մանչեսթըրի միացած 30 տարեկան Բոլ իր կատարած 275 մրցումներուն ընթացքին նշանակեց 121 կոլ: Այս եղանակին սակայն հոյանտացի Ռոտ Վան Նիւթըրուի ժամանումը պատճառ դարձաւ, որ Բոլ պահեստի մարզիկ նկատու առնուի: Նիւքեմսթընի հետ ան կատարեց 84 մրցում, նշանակելով 68 կոլ: Շատ հաւանաբար երեքշաբթի, 1 Եունայթըտը



Էնտի Բոլ, Պլեյպարնի մարզիչ Կրեհէմ Սուլէպի հետ:

2002ին, Բոլ Թոթենհամի դէմ տեղի ունենալիք մրցումին առաջին անգամ ըլլալով կրէ իր նոր կազմին շապիկը:

Բոլ Անգլիոյ ֆուտբոլի ազգային խումբին շապիկը կրած է 15 անգամ, նշանակելով մէկ կոլ: Նիւքեմսթըն եւ Մանչեսթըր Եունայթըտէն բացի, Բոլ մաս կազմած է նաեւ Արսենալի, Ֆուլհէմի եւ Պրինսթոն Սիթիի:

ՊԱՍԹԵՐՊՈԼ

Յ.Մ.Ը.Մ. ՅԱՂԹԵՑ ԷՕ. ԷՆ. ՊԷ.Ի

Լիբանանի պաշտօնագրի աղջկանց Ա. դասակարգի ախոյեանութեան 10րդ եւ դարձի վերջին հանգրուանի մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ. ֆուտբոլի ներկայացուցչական կազմը, երէկ էօ. էն. Պէ.Ի դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին 45-25 արդիւնքով պարտութեան մատնեց դաշտին տէրերը, արձանագրելով եղանակի իր 5րդ յաղթանակը: Ա. կիսախաղին, 20-8 արդիւնք մը ձեռք ձգելէ ետք էօ. էն. Պէ.Ի վրայ, Բ. կիսախաղին Հ.Մ.Ը.Մ. դարձեալ տիրապետեց անոր վրայ եւ մրցումը աւարտեց 19 կէտի տարբերութեամբ:

Կրէյս Սթամպուլեան եւ Ալին Լոշիաճեան նշանակեցին 7ական կէտ, իսկ Հ.Մ.Ը.Մ. օտարականը՝ Սթիլա Օֆորում՝ 21 կէտ:

Նշենք, թէ երթի երկրորդ մրցումները կը սկսին յառաջիկայ տարի, Հինգշաբթի, 3 Եունայթըտ 2002ին: Հ.Մ.Ը.Մ. մրցակիցը պիտի ըլլայ Սատաբա: Մրցումը տեղի պիտի ունենայ Սատաբայի դաշտին վրայ, ժամը 19:00ին:

Լիբանանի աղջկանց Բ. դասակարգի ախոյեանութեան 9րդ հանգրուանի մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ. Պէյրուսթ 61-55 արդիւնքով պարտութիւն մը կրեց Ֆիտա Սայտայէն, երէկ Ղազիրի դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին: Ա. կիսախաղին, Հ.Մ.Ը.Մ. Պուրճ իմացուցեց իր կոլերը, որ իր դէմ ունէր Սաթէսի (Պէյրուսթ) աղջիկները, 69-19 արդիւնքով պարտութիւն մը կրեց անկէ:


Լիբանանի տղոց Դ. դասակարգի ախոյեանութեան իր կատարած երրորդ մրցումին, Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտի կազմը 60-51 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Անտալոսէն, դուրս մնաց մրցաշարէն: Նկատի ունենալով, որ մրցումները տեղի կ'ունենան իմացուցեց իր կոլերը, Հ.Մ.Ը.Մ. չկրցաւ առաջին երկու դիրքերէն մէկը գրաւել, յաջորդ հանգրուան անցնելու համար:

Լիբանանի Բ. դասակարգի տղոց ախոյեանութեան 17րդ հանգրուանի մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ. ֆուտբոլի ներկայացուցչական կազմը Շաբաթ օր «Թնճուկեան» մարզադաշտին վրայ տեղի ունեցած մրցումին 87-76 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Շեպիպթ Չորթիան, արձանագրելով եղանակի իր 13րդ յաղթանակը:

Հ.Մ.Ը.Մ. յաջորդ մրցակիցը պիտի ըլլայ Ահիա Ռիատան: Մրցումը տեղի պիտի ունենայ Զորեշարթի, 9 Եունայթըտ 2002ին, Նորթ Հէլենի դաշտին վրայ, ժամը 21:00ին:

ԷՆ. ՊԷ. ԷՅ.

ՈՒԻԶԱՐՏԾ ՅԱՂԹԵՑ



ՏԵՅՎԻՄ ՈՒԵՎԻ (թիւ 4), կը փորձէ գերազանցել

էն. Պի. էյ.Ի երէկուան մրցումներուն, Ուաշինկթըն Ուիզարտ յաղթեցաւ 105 - 86 արդիւնքով պարտութեան մատնել իր հիւրը՝ Շարլթ Հորնէթը, շնորհիւ Մայքըլ Ճորտնի նշանակած 51 կէտերուն: Զորտն, որ անցեալ շաբաթ ինտիմա Փէյսըրգի դէմ տեղի ունեցած մրցումին նշանակած էր միայն վեց կէտ, երէկուան մրցումին յաղթեցաւ իր 34 կէտերը նշանակել քորթըրին:

Տալասի մէջ, Մալթրիքս արձանագրեց յաջորդական իր 9րդ յաղթանակը 113 - 97 արդիւնքով պարտութեան մատնելով Մթլանթա Հոքսը: Մալթրիքսի յաղթանակը կերտեցին Տըրք Հովիթցի եւ Սթիւ Նէշ: Առաջինը նշանակեց 35 կէտ եւ 12 ռիպաունտ, իսկ երկրորդը՝ 29 կէտ եւ 10 շուպ:

Մալթրիքսի մարզիչ Տոն Նելսըն իր ասպարէզին ընթացքին այսօրով արձանագրեց իր 1000րդ յաղթանակը:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները:

Պուսթըն Սելթիքս - Լոս Անճելըս Բիւնքը 105 - 103
Ուաշինկթըն Ուիզարտ - Շարլթ Հորնէթ 107 - 90
Նիւ Ճորպի Նէթ - Ինտիմա Փէյսըրգի 98 - 93
Շիքսօ Պուլ - Բիլվինտ Քալաիլի 103 - 80
Տալաս Մալթրիքս - Աթլանթա Հոքս 113 - 97
Սիւնուքի Պաքս - Սան Անթոնիո Սփըր 102 - 92
Ֆէօսիքս Սան - Տէնսիլ Նակթիք 109 - 92
Եունայթըտ - Ֆիլադելֆիա Սիւքըր 89 - 81
Սիւնուքի Սիւնուքի - Թորոնթո Ռեպլիք 101 - 75

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը: Սայնմի Հիթ - Տիթթոյիթ Փիլթըն Կալիֆորնիա Սփըր - Սեմֆիա Կրիզիլ Զորանտո Մէքիք - Նիւ Եորք Նիքս Պուսթըն Սելթիքս - Սաքրամենթո Էրիկա Հիւսթըն Ռոքթիք - Լոս Անճելըս Լէյքըր Բիլինթա Կուլվա - Փորթլէնտ Թրէյլ Պէյքըր

25 ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ ԱՌԱՋԻՆ ՄԵ ԳԱՄԸ ԸԼԼԱՆՈՎ

ԿԻՊՐԱՅԻ ԹՈՒՐԲ ԵՒ ՅՈՅՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆԻԿՈՍԻՈՅ ՄԷՋ



ՏԵՆՔՔԱՅ ԵՒ ԶԼԵՐԻՏԵՍ

Թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ ՏենքքաՅ Շաբաթ օր աւելի քան 25 տարուան մէջ առաջին անգամ ըլլալով կղզիին հարաւային կողմը անցած է, Կիպրոսի նախագահ Կլաֆքոս Քլէրիտէ-սի հետ ընթերցելու համար:

Ապահովութեան աննախընթաց միջոցառումներու ներքեւ, ՏենքքաՅ անցած է ՄԱԿի հակակշիռին ենթակայ «կանաչ գիծ»էն, որ մայրաքաղաք Նիկոսիան երկու մասերու կը բաժնէ:

Թէեւ ընթերցող ընկերային երեւոյթ մը կը նկատուի, այսուհանդերձ դիւանագէտներ երկու ղեկավարներուն միջեւ տեսակցութիւնը կենսական քայլ մը կը նկատեն՝ մթնոլորտը բարելաւելու համար, Կիպրոսի վերամիացման գծով Յունուար 16ին սկսելիք բանակցութեանց նախօրեակին:

Յոյն կիպրացի ուսանողներ եւ գաղթական խմբակներ, որոնք կը բողոքեն այցելութեան դէմ, հեռու պահուած են: Իսկ 1974էն ի վեր անհետացածներու պարագաներ հաստատուած են Քլէրիտէսի ապարանքը տանող ճամբուն վրայ:

ՏենքքաՅ Դեկտեմբեր 5ին Հիւսիսային Նիկոսիոյ իր ապարանքին մէջ ընթերց մը սարքած էր ի պատիւ Քլէրիտէսի:

Անիկա կը յաջորդէր անկիւնադարձային տեսակցութեան մը, որուն ընթացքին ղեկավարները որոշած էին լայնածիր բանակցութիւններու սկսիլ՝ լուծելու համար տագնապը, որ Յունաստանի եւ Թուրքիոյ միջեւ լարուածութեան բանալի աղբիւր մը կը մնայ եւ կրնայ բարդացնել Ե. Միութեան ընդարձակման ծրագիրը:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՓԱՔԻՍՏԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԸ ՊԱՐԱԳԱՅԻՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԶՕՐԱՎԻԳ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Հնդկաստանի քաղաքական կուսակցութիւնները, որոնք ընդհանրապէս տարակարծիք են, երէկ իրենց ամբողջական պօրակցութիւնը յայտնեցին կառավարութեան՝ խոստանալով միացեալ ամուր ճակատ մը կազմել, եթէ Փաքիստանի դէմ պատերազմ մը մղէ երկիրը:

Վարչապետ Աթալ Դեհարի Վաճիպի աննախընթաց հանդիպումի մը հրաւիրեց Հնդկաստանի բոլոր կուսակցութիւնները՝ ապահովելու համար անոնց պօրակցութիւնը Փաքիստանի դէմ պայքարին: Վաճիպի կ'ուզէր նաեւ լռեցնել քննադատները, որոնք կ'ըսեն, թէ վարչապետը չի խորհրդակցիր քաղաքական բոլոր թեւերուն հետ:

Խորհրդարանական հարցերու նախարարը ըսաւ, որ երկու ժամ տեւած հանդիպումը լաւագոյնս արտայայտեց Հնդկաստանի ազգային միասնականութիւնը: Ան աւելցուց, որ բոլոր ներկաներն ալ դէմ են պատերազմին ընտրանքին, սակայն եթէ Հնդկաստան մը յայտարարուի, բոլորը պօրավիճ պիտի կանգնին կառավարութեան:

Աւելի քան մէկ շաբաթ է ի վեր, Հնդկաս-

տան եւ Փաքիստան յաւելեալ ուժ կը կեդրոնացնեն իրենց սահմանագիծին վրայ՝ թափ տալով լարուածութեան: Նիւ Տէյի կ'ամբաստանէ իսլամապետը, դիտել տալով որ անիկա ապաստան կու տայ իսլամական ծայրայեղականներու, որոնցմէ տասնեակ մը Հնդկաստանի խորհրդարանին մէջ անձնասպանական գործողութիւն մը կատարեց երկու շաբաթ առաջ: Փաքիստան կը հերքէ, որ որեւէ կապ ունեցած է գործողութեան հետ:

ՊՈՒՅ ԵՒ ՊԼԵՐ ՀԱՆՂԱՐՏՈՒԹԵԱՆ ԿՈՅ ԿՈՒՂԵՆ

Միացեալ Նահանգներու նախագահ ձորձ Պուշ Էնթաճայնային հաղորդակցութիւններ ունեցաւ Վաճիպիի եւ Փաքիստանի վարչապետ Փերվէշ Մուշարրաֆի հետ: Պուշ կոչ ուղղեց երկու ղեկավարներուն գործակցելու՝ մեղմացնելու համար շրջանային լարուածութիւնը: Սպիտակ Տան բանբերը ըսաւ, որ Պուշ Մուշարրաֆին պահանջած է սահմել ծայրայեղականները՝ արմատական միջոցառումներ որդեգրելով անոնց դէմ:

Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլէր իր կարգին երէկ կոչ ուղղեց Հնդկաստանի եւ

Փաքիստանի ինքնապաշտպանութիւններու, որովհետեւ երկու երկիրներէն որեւէ մէկուն համար ալ նպաստաւոր պիտի չըլլայ լարուածութեան սրումը: Պլէրի բանբերը ըսաւ, որ վարչապետը Շաբաթ օր հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Պուշի հետ, քննարկելու համար Փաքիստան - Հնդկաստան լարուածութիւնը:

ՈՒԱՇԻՆԿՅԹԸ ԱՒԵԼԻՆ ՊԵՏԵ Ե ԸՆԷ

Կ'ԸՍԵ ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆ ԿՐԱՀԱՄ

Միացեալ Նահանգներու Ծերակոյտի Հետախուզական Յանձնախումբի ղեկավար Թերակուտական Պոպ Կրահամ երէկ «Մի. Էն. Էն.»ի հետ հարցազրոյցի մը ընթացքին ըսաւ, որ Ուաշինկթըն աւելին պէտք է ընէ կանխարգիլելու համար Հնդկաստան - Փաքիստան պատերազմ մը, որ կրնայ աղետաբեր ըլլալ: «Գիւսնագիտական ճիգերը պէտք է բազմապատկուին», կ'ըսէ ան:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՓԵՐՈՒ

ԼԻՄԱՅԻ ՄԷՋ ՀՐԴԵՀ. 240 ԶՈՀ ԵՒ ԲԱԶՄԱԹԻԻ ՎԻՐԱՒՈՐՆԵՐ

Փերոյի մայրաքաղաք Լիմայի մէջ հրաւիրուած միութեան պայքարողներու հետ հարցազրոյցի մը ընթացքին Լիմայի առեւտրական կեդրոնի մը մէջ, սակայն անիկա այրած է շրջակայ բազմաթիւ շէնքեր, մերձաւոր տներ եւ առեւտրական շէնքեր: Երբ 115 հոգի հիւանդանոց տեղափոխուած է:

Հրդեհը կեդրոնացած է մայրաքաղաք Լիմայի առեւտրական կեդրոնի մը մէջ, սակայն անիկա այրած է շրջակայ բազմաթիւ շէնքեր, մերձաւոր տներ եւ առեւտրական տասնեակ մը ինքնաշարժներ:

Այլ անատեսներու համաձայն՝ հրդեհը ծայր տուած է, երբ քում մը հսկայական հրդեհ մը պատճառած է, առնուազն 240 զոհ խլելով եւ առեւտրական բանուկ կեդրոն մը դիակներու եւ աւերակներու դժոխային վայրի մը վերածելով: Երբ 115 հոգի հիւանդանոց տեղափոխուած է:

Հրդեհը կեդրոնացած է մայրաքաղաք Լիմայի առեւտրական կեդրոնի մը մէջ, սակայն անիկա այրած է շրջակայ բազմաթիւ շէնքեր, մերձաւոր տներ եւ առեւտրական տասնեակ մը ինքնաշարժներ:

ԱՄՍՏՐԱԼԻՈՅ ՄԷՋ

Աւստրալիոյ մեծագոյն քաղաքին՝ Միտնիի շրջակայ անտառներու հրդեհները


երէկ հակակշիռի տակ կը պահուէին հրդեհներու եւ քնակիչներու կողմէ, որոնք Դեկտեմբեր 25էն ի վեր պայքար կը մղէին, մինչ ոստիկանութիւնը կը հետապնդէր անոնց, որոնք ենթադրաբար դիտումնաւոր կերպով պատճառած են հրդեհը:

Ոստիկանութիւնը, որ 8 հոգի ձերբակալած է այդ գծով, ունի կասկածներ, թէ Նիու Սաութ Օւելլզ մահաճիւղի մէջ ծայր տուած աւելի քան 100 հրդեհներուն մեծ մասը դիտումնաւոր կերպով կատարուած է:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5042

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ




ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- Տապալիի քար - Մեղեխ:
- Քաղաքային բարձրաստիճան պաշտօնատար - Այրուբենէն:
- Սպանացի պարոն - Պողոտեսակ:
- Ինչպէս - Արական օտար անուն:
- Տարիք - Արջամաղի:
- Պարբերաբար գուժարուող ժողովներ:
- Պարտեսակ - Շաղկապ:
- Լեզգոնական ռազմավայր - Պէյրուի արեւմտեան թաղամասերէն:
- Պատկերներ - Էական բայ:
- Մաղկանց լեռնապարի գագաթներէն - Աչք - Այրուբենէն:
- Յրանսական գետ - Առաջինին անմիջապէս յաջորդող:

ՈՒՂԱՀԱՅԵԱՅ

- Չարաբեր - Սիւսանի ծննդավայրը:
- Փիւնիկեան աստուծո՛ր - Ժամանակի միաւոր:
- Անմիջապէս - Տապալտուէն:
- Ինք - Պէյրուի Հնագոյն շուկաներէն:
- Արամազդի գուստրերէն - Մոխր:
- Վառ - Գոյներով պատուական քար - Այրուբենէն - Շինանիւթ:
- Խոխոնջ - Կրկնուած քաղաքայիններ:
- Անթերի, ամբողջական:
- Թուր - Իրերայաջորդ տառեր:
- Բայց - Այր մարդիկ:
- Որ - Իջեալ, կայան:



ԹԻԻ 5041

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ


ԼԱԻԱԳՈՅՆ ՄՏԱԾՈՒՄԸ ԿԵՐՋԻՆ ՎԱՅՐԿԵԱՆԻՆ



Model 21D3XMJ 21inch FLAT

TOSHIBA

\$269



2 Head VCR Model V-E28 \$119
4 Head VCR Model V-E38 \$149

\$119

ԱՐԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ
Պուրձ Համուտ, Բաղաքապետարանի
հրապարակ, հեռ. 241000

ولعت الشتوية مع

Panasonic

وآلاف الهدايا داخل العلب

21" TC-21PM30R
شاشة مسطحة
متعدد الأنظمة
محملة
ريموت
\$ 305

15" TC-15PM10R
شاشة مسطحة
متعدد الأنظمة
محملة
ريموت
\$ 185

هدية سماعة بقيمة \$ 20

العرض صالح فقط على أجهزة التلفزيون / الفيديو / الفيديو / كاميرا الفيديو المستوردة من قبل
الوكيل الحصري: شركة توتونجيان ش.م.ل. ٢٤٢٢٠٢ - ٧١١٩٦٧ - ٧١٢١٩/١٣٠ (٠٤)
مدة العرض: من ٢٠٠١/١١/١٩ لغاية ٢٠٠٢/١/٢٠

هدية راديو كاسيت بقيمة \$ 45